Արմինե Հ. Տիգրանյան

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Արդի միջազգային-իրավական համակարգում*

Բանալի բառեր – մշակութային արժեքներ, ժառանգության պաշտպանությունը գրավյալ/օկուպացված տարածքներում, միջազգային մարդասիրական իրավունք, մշակույթի իրավունք, հայկական մշակութային ժառանգության ոչնչացում, էթնիկ զտում, վանդալիզմ, հակահայ քաղաքականություն:

Մուտք

Հոդվածում քննության են ենթարկվում Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի կողմից օկուպացված[1] տարածքներում հայկական մշակութային արժեքների յուրացման, ավերման, պղծման և վանդալիզմի դեպքերը՝ գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային իրավական սկզբունքների տեսանկյունից: Այդ նպատակով ներկայացվում են նաև մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային իրավական համակարգի ձևավորումն ու զարգացումը Հաագայի, Ժնևի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպայի խորհրդի ընդունած մի շարք կոնվենցիոնալ դրույթների, մարդու իրավունքները պաշտպանող փաստաթղթերի, միջազգային հումանիտար իրավունքի նորմերի և օկուպացված տարածքներում մշակութա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 08.08.2021:

1 Ըստ «Ցամաքում պատերազմի օրենքների և սովորույթների մասին» 1907 թ. կոնվենցիայի 42-րդ հոդվածի՝ օկուպացված է համարվում այն տարածքը, որը գտնվում է հակառակորդի ուժերի իշխանության տակ: Օկուպացված է համարվում այն տարածքը, որտեղ ռազմական կառավարումն իրականացվում է զինված ուժերի կողմից և չի ներառում այն տարածքը, որտեղ տեղակայված են զինված ուժեր, որոնք, սակայն, չեն ստանձնել գերագույն իշխանություն (տե՛ս Law of belligent occupation, The Judge Advocate General's School ANN Arbor, Michigan, https://www.loc.gov/rr/frd/Military_Law/pdf/law-of-belligerent-occupation_11.pfd (մուտք՝ 20.05.2021), էջ 1):

Վէմ համահայկական հանդես, ԺԹ (ՀԹ) տարի, թիվ 3(75), հուլիս-սեպտեմբեր, 2021

յին արժեքների պաշտպանության սովորութային օրենքների քննության միջոցով:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում նաև Ադրբեջանի կողմից հայկական ինքնության և մշակութային ժառանգության նպատակամիտված ոչնչացման ծրագրված պետական քաղաքականությանը:

1. Հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը Ադրբեջանի կողմից արցախյան պատերազմների ժամանակ

Մշակութային ժառանգությունն ամրապնդում է խմբի ազգային-մշակութային ինքնությունը[2]: Ըստ Ռ. Բևանի՝ այն հենց ազգային ինքնության ձևավորման աղբյուր է և էթնիկ պատմության հավաքական հիշողություն[3]: Ժառանգության պահպանությանն ուղղված մարտահրավերներից թերևս ամենառիսկայինը պատերազմներն են, որոնք սպառնում են թե՛ նրա գոյությանը և թե՛ տվյալ տարածքի ու համայնքի ամբողջականությանը[4]: Որպես ժողովրդի պատմական, մշակութային կամ կրոնական ինքնության խորհրդանիշ՝ բախումների ընթացքում այն ամենախոցելին է դիտավորյալ հարձակման, կողոպուտի ու վանդալիզմի պատճառով[5]: Մշակութային ժառանգությունը շարունակաբար թիրախավորվում է նաև համայնքի սոցիալական կառուցվածքը թուլացնելու և կոլեկտիվ ինքնությունը ոչնչացնելու նպատակադրմամբ[6]:

Հայոց ցեղասպանությունը Հարավային Կովկասում շարունակելու համար Օսմանյան Թուրքիայի բանակի սվիններով 1918 թ. ստեղծված Ադրբեջան արհեստածին պետությունն ազգային ինքնության կերտման և որոշակի տարածքների «պատկանելությունը» ապացուցելու ճանապարհին իր կազմավորումից ի վեր որդեգրել է ընդգծված հակահայ պետական քաղաքականություն[7]: Դրա հիմքում այդ տարածքներում հազարամյակների

---

2 Տես **Christiane Johannot-Gradis**, Protecting the past for the future: How does law protect tangible and intangible cultural heritage in armed conflict?, International Review of the Red Cross, 2015, 97 (900), էջ 1253-1275:

3 Տես **Bevan R.**, The Destruction of Memory. Architecture at War. London: Reaktion Books, 2006, **Galaty M.,** Blood of Our Ancestors: Cultural Heritage Management in the Balkans. In "Contested Cultural Heritage Religion, Nationalism, Erasure, and Exclusion in a Global World". Edited by H. Silverman. New York: Springer Publisher, 2011:

4 Տես **Neeru Chadha**, Protection of Cultural Property During Armed Conflict: Recent Developments, ISIL Year Book of International Humanitarian and Refugee Law 12, 2001, http://www.worldlii.org/int/journals/ISILYBIHRL/2001/12.html (մուտք՝ 15.12.2020):

5 Տես **Keith Suter,** We Must do More to Protect Cultural Property in Wartime, https://www.onlineopinion.com.au/view.asp?article=2407 (մուտք՝ 15.12.2020):

6 Տես **Bevan R.,** նշվ. աշխ.:

7 Ադրբեջանի հակահայ քաղաքականությունը սկիզբ է առել Թուրքիայի ցեղասպանական քաղաքականության ազդեցությամբ՝ 1918 թ. «Ադրբեջան» պետական միավորի կազմավորման և 1930-ական թթ. «ադրբեջանցի» ժողովրդի ձևավորման նպատակադրման հետևանքով: Այն բուռն զարգացել է խորհրդային ժամանակաշրջանում (հատկապես 1960-ականներից) և մինչ օրս շարունակում է գործադրվել (տես http://www.noravank.am/upload/pdf-/book.pdf (մուտք՝ 15.12.2020), էջ 21):

կենսագրություն ունեցող հայոց ինքնության և մշակութային հարուստ ժառանգության շարունակական ոչնչացումն է թե՛ թվացյալ «խաղաղության», թե՛ պատերազմի ժամանակ: 1921 թ. Լեռնային Ղարաբաղի՝ Խորհրդային Ադրբեջանին բռնակցումից հետո հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը ոչ միայն չդադարեց, այլև սկսեց խթանվել պետական մակարդակով: Արցախահայության՝ սեփական ինքնությանը համապատասխան ապրելու իրավունքը մշտապես ոտնահարվել է թե՛ խորհրդային, թե՛ անկախ Ադրբեջանի կողմից, իսկ էթնիկ զտման և մշակութային ցեղասպանության բազմաթիվ դրսևորումները, արցախահայության ժառանգության հանդեպ բացահայտ անհանդուրժողականությունը, հայկականության հետքերի, հայերի բնիկության փաստերի ժխտումը, եղած մշակութային ժառանգությունն աղվանական և ադրբեջանական հայտարարելը ի վերջո հանգեցրին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի՝ Ադրբեջանից անջատմանը: Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացմամբ բաղձալի տարածքի էթնիկական կազմի փոփոխության մոլուցքը հանգեցրեց նրան, որ արցախյան թե՛ առաջին, թե՛ երկրորդ պատերազմների ընթացքում այդ ժառանգությունը դարձավ ամենախոցելին՝ վտանգելով մշակութային համայնքի ամբողջականությունը և անգամ Արցախի գոյությունը:

Ինչպես նշում է ժառանգության հարցերով զբաղվող մասնագետներից Դ. Վիեջո-Ռոսեն, «Ժառանգության վրա հարձակումը միտված է հակառակորդի «շարունակականության թելը» ոչնչացնելուն՝ չեզոքացնելով որոշակի տարածքի պատկանելության գիտակցությունը այն ակնկալիքով, որ ավելի հեշտ կլինի վերահսկել այդպիսի հասարակությանը»[8]: Այս համատեքստում դժվար չէ նկատել, որ Ադրբեջանի հակահայ քաղաքականության հիմքում հենց հայկական ինքնության շարունակականության թելը ոչնչացնելու միտումն է:

Ընդհանուր առմամբ պատերազմների պատճառներն ուսումնասիրած մասնագետները առանձնացնում են 4 դրդապատճառներ՝ քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային[9], որոնցից որևէ մեկի շուրջ են ծավալվում աշխարհի այս կամ այն պատերազմները: Բայց դժվար չէ նկատել, որ Արցախի դեմ 2020 թ. աշնան պատերազմից առաջ, ընթացքում և հետո Ադրբեջանի գործողությունները միայն ռազմական նպատակներով չեն սահմանափակվել և հետապնդել են թե՛ քաղաքական, թե՛ ռազմական, թե՛ տնտեսական և թե՛ մշակութային նպատակներ: Եվ ինչպես վերահաստատում է Էրիկ Ռոթելիսբերգերը, շատ պատերազմների նպատակն այլևս լոկ զինված ուժերի հաղթանակը չէ, այլ բաղձալի տարածքի էթնիկական

8 **Viejo-Rose D.,** Destruction and Reconstruction of Heritage: Impacts on Memory and Identity. In "Heritage, Memory, and Identity". Edited by H. K Anheier and R. I. Yudhishthir. London: SAGE, 2011:

9 Տես **Johan Brosché**, **Mattias Legnér, Joakim Kreutz and Akram Ijla**, Heritage under Attack Motives for Targeting Cultural Property during Armed Conflict, "International Journal of Heritage Studies", 2016, էջ 1-26:

կազմի փոփոխությունը[10]: Մշակութային ժառանգության ոչնչացումն այս դեպքում Ադրբեջանի համար պատերազմական զենք էր՝ խթանելու էթնիկական զտումները՝ նպատակ ունենալով հայկական մշակութային ինքնության վերացումը:

Հայկական մշակութային արժեքների ոչնչացման բազմաթիվ դեպքերը վկայում են այն մասին, որ, անկախ ռազմական գործողությունների առկայությունից կամ բացակայությունից, Արցախը մշտապես «մշակութային պատերազմի մեջ» է եղել, քանզի «խմբի ինքնության խորհրդանիշ համարվող մշակութային ժառանգության ոչնչացումը, շատ մասնագետների պնդմամբ, «մշակութային» պատերազմի ձև է[11]: Այս համատեքստում կարող ենք վստահաբար նշել, որ Ադրբեջանի կողմից հայկական մշակութային արժեքների կանխամտածված և հետևողական ոչնչացման քաղաքականությունն ամբողջությամբ համապատասխանում է «մշակութային զտում»[12] կամ նույնիսկ «մշակութային ցեղասպանություն»[13] եզրույթներին: Քանզի մշակութային ժառանգության ոչնչացումը ապացուցված կապեր ունի նաև ցեղասպանության հետ՝ և՛ նախապատկերելով այն, և՛ հանդիսանալով դրա առանցքային բաղադրիչը[14]: Եվ պատահական չէ, որ Ադրբեջանի կողմից հայկական ազգային-հոգևոր մշակույթի կանխամտածված և հետևողական ոչնչացման քաղաքականությունը, ըստ 1948 թ. «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիայի», որակվում է որպես մշակութային ցեղասպանություն և հանցագործություն՝ ուղղված ողջ մարդկության դեմ[15]: Դա հաստատում են նաև շատ տեսաբաններ՝ պնդելով, որ մշակութային ժառանգության վրա հարձակումները սովորաբար նախորդում են ցեղասպանության առնվազն փորձին[16]: Իսկ Թոմաս Գ. Վայսը և Նինա Քոննելին ավելացնում են, որ, կանխելով մշակութային

10 Տե՛ս **Eric Roethlisberger,** The importance of respect for international humanitarian law and the activities of the ICRC Member of the Committee, "Protection of Cultural Property in the Event of Armed Conflict". Report on the Meeting of Experts (Geneva, 5-6 October), ICRC, 2000, էջ 15-19, file:///C:/Users/User/Downloads/cutural-property-report-icrc_002_0805%-20(3).pdf (մուտք՝ 15.12.2020):

11 Տե՛ս **Kalliopi Chainoglou**, The Protection of Intangible Cultural Heritage in Armed Conflict: Dissolving the Boundaries Between the Existing Legal Regimes?, "Santander Art and Culture Law Review", 2/2017 (3), էջ 109-134, file:///C:/Users/User/Downloads/SAACLR%20nr%202_2017_(3)_10%20(2).pdf (մուտք՝ 15.12.2020):

12 Կոնկրետ բնակչության պատմության, հիշողության, մշակութային ժառանգության միտումնավոր և հետևողական ոչնչացման, մշակութային ինքնության, այդ թվում՝ գրքերի և ձեռագրերի, ավանդական պրակտիկայի, ինչպես նաև աղոթատեղիների, հիշողության և ուսման ժխտման հետ նման հարձակումները սահմանվել են որպես «մշակութային զտում»: Տերմինը կիրառվել է 2014 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Իրինա Բոկովայի կողմից Իրաքի և Սիրիայի մշակութային ժառանգության ոչնչացման առնչությամբ: Այն իրավաբանական տերմին չէ:

13 Ըստ իրավագետ Ռաֆայել Լեմկինի՝ ցեղասպանությունը ոչ միայն ազգային կամ կրոնական խմբի ֆիզիկական բնաջնջումն է, այլև նրա ազգային-հոգևոր մշակույթի ոչնչացումը:

14 Տե՛ս **Bevan R.,** նշվ. աշխ.:

15 Տե՛ս Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, 9 December 1948, 78 UNTS 277: Տե՛ս նաև United Nations General Assembly, Report of the Special Rapporteur…, A/HRC/31/59, para. 64, **Hausler K.,** Protection of Cultural Heritage in Armed Conflict, in: **S. Casey-Maslen** (ed.), The War Report: Armed Conflict in 2013, Oxford: Oxford University Press, 2014, էջ 379:

16 Տե՛ս **Frowe H. and Matravers D.**, Conflict and Cultural Heritage, A Moral Analysis of the Challenges of Heritage Protection, J. Paul Getty Trust Occasional Papers In Cultural Heritage Policy Number 3, 2019, Los Angeles Getty Publications, էջ 4-32, https://www.getty.edu/publications/occasional-papers-3/ (մուտք՝ 15.12.2020):

ժառանգության ոչնչացումը, կանխվում է նաև ցեղասպանությունը[17]: Եվ դեռ ավելին, ըստ Հելեն Ֆրոուի և Դերեկ Մատրավերսի, արդարացի է նույնիսկ բռնի ուժի կիրառումը մշակութային ժառանգության պաշտպանության համար. «Մշակութային ժառանգությունը պաշտպանելը երբեմն կարող է հակասել մարդկանց պաշտպանելուն, քանզի չափազանց մեծ է ժառանգության ներքին արժեքը համայնքների կյանքում»[18]: Ու թեև վերջին պատերազմը նաև ֆիզիկական բնաջնջում էր, բայցևայնպես, այդ գործողությունը ցեղասպանություն որակելու համար բավարար է նույնիսկ տվյալ համայնքի հավաքական ժառանգության, պատմական կոլեկտիվ հիշողության ոչնչացմանն ու առօրյա կենսընթացի խաթարմանն ուղղված ցանկացած գործողություն:

Ինչպես նշվեց, Արցախում հայկական հուշարձանների ոչնչացումը կրել է մշտական բնույթ, բայց հատկապես ահագնացել է 1988–1994 թթ. պատերազմի ընթացքում, երբ հեռահար հրետանուց գնդակոծվել կամ հրթիռակոծվել են հայկական քրիստոնեական շատ կառույցներ. հրկիզվել են 19-րդ դարի Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին, Գանձասարի, Ամարասի, Դադիվանքի վանական համալիրները (Դադիվանքն օգտագործվել է որպես անասնագոմ[19]), Ծիծեռնավանքի և Վանքասարի եկեղեցիները, Եղնասարի վանքը և տասնյակ այլ հուշարձաններ[20]:

Հետագա տարիներին՝ 1998–2006 թթ., «խաղաղ պայմաններում»[21] ադրբեջանական բանակը ծանր շինարարական տեխնիկայի օգնությամբ քանդեց և հողին հավասարեցրեց Նախիջևանի Հին Ջուղայի միջնադարյան հայկական գերեզմանատան շուրջ 4000 փորագիր խաչքարեր և գերեզմանաքարեր, իսկ գերեզմանոցի ազատված տարածքը վերածեց հրաձգարանի: Միջազգային հանրության բացարձակ անտարբերության պայմաններում Ադրբեջանը հայտարարեց, որ «հայերը երբեք չեն ապրել այդ տարածքներում», իսկ հուշարձանները ոչ թե հայկական, այլ աղվանական են[22]:

Ադրբեջանական վայրագությունները նոր թափով դրսևորվեցին արցախյան պատերազմից գրեթե 20 տարի անց՝ 2016 թ. ապրիլի 2–5-ի քա-

17 Տե՛ս **Thomas G. Weiss and Connelly N.**, Cultural Cleansing and Mass Atrocities: Protecting Cultural Heritage in Armed Conflict Zones, J. Paul Getty Trust Occasional Papers in Cultural Heritage Policy, no. 1 (2017), էջ 13, http://www.getty.edu/publications/pdfs/CulturalCleansing_Weiss_Connelly.pdf (մուտք՝ 15.12.2020):

18 **Frowe H. and Matravers D.**, op. cit., p. 6.

19 Հարկ է նշել, որ մշակութային ժառանգության կառույցի գործառույթի փոփոխությունը հավասարազոր է վերջինիս ոչնչացմանը, քանզի այն կարող է ոչնչացնել նաև ժառանգության վերաբերյալ գիտելիքն ու պատմությունը (տե՛ս **Christiane Johannot-Gradis**, նշվ. աշխ., էջ 1253-1275):

20 Տե՛ս **Կիրակոսյան Լ.**, Մշակութային Եղեռն (Արցախի ճարտարապետական հուշարձանների օրինակով), «Հայագիտության հարցեր», Եր., 2014, N 1, էջ 107-118:

21 Խաղաղ ժամանակ մշակութային արժեքների կանխամտածված ոչնչացումը նույնպես արգելված է թե՛ պատերազմական և թե՛ ՄԱԿ-ի մշակութային մանդատ ունեցող ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք կոնվենցիաներով, այդ թվում՝ 1970 թ. ընդունված «Մշակութային ժառանգության կանխամտածված ոչնչացման» և 1972 թ. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության» կոնվենցիաներով:

22 Անտեսվում են պատմական սկզբնաղբյուրների, այդ թվում՝ վիմական արձանագրությունների տեղեկությունները և դրանք ներկայացվում են իբրև աղվանական մշակութային արժեքներ:

ռօրյա պատերազմի ժամանակ, երբ, խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը[23], ռմբակոծությամբ զգալի վնասներ հասցվեց Թալիշ գյուղի մատուռին: Այս առիթով հարկ է մեջբերել միջազգային քրեական դատարանի դատախազ Ֆաթոու Բենսուդայի խոսքերը. «Հարձակումը դավանանքի և պատմական հուշարձանների դեմ քանդում է ժողովրդի արմատները և անդառնալիորեն ազդում նրա սոցիալական պրակտիկայի ու կառուցվածքի վրա»[24]:

Իհարկե, գաղտնիք չէին Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ուժի կիրառմամբ լուծելու Ադրբեջանի ռազմավարական հակումները: Ադրբեջանի նախագահը բազմիցս հրապարակավ հայտարարել էր, որ «Ադրբեջանը կվերականգնի իր տարածքային ամբողջականությունը՝ օգտագործելով ռազմական տարբերակը»[25], ինչի արդյունքը 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված արյունահեղ պատերազմն էր: 44 օր տևած պատերազմի ընթացքում մարտական ծանր տեխնիկայով անկանոն հրետակոծման և ռմբակոծման միջոցով հարձակման է ենթարկվել Արցախի հայկական մշակութային ժառանգությունը: Կրակի գոտում էին հայտնվել ոչ միայն անշարժ, այլև շարժական ժառանգության արժեքներ. վնասվել են թանգարաններն ու մի շարք հավաքածուներ, բազմաթիվ խաչքարեր, հուշարձաններ ու մշակութային կառույցներ, հրթիռակոծվել են Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին, Տիգրանակերտի հնագիտական ճամբարը, Շուշիի մշակույթի տունը և այլ կառույցներ[26]: Վանդալիզմի այսպիսի դրսևորմամբ Ադրբեջանը խախտել է իր՝ տարբեր կոնվենցիաներով ստանձնած միջազգային պարտավորությունները և պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության պահպանության պարտադիր միջազգային սովորութային նորմերը[27]:

Հարկ է ընդգծել, որ Ադրբեջանի ագրեսիվ գործողություններն ուղղված են ոչ միայն Արցախի, այլև ողջ մարդկության ժառանգության դեմ, քանզի «Ցանկացած ժողովրդի մշակութային արժեքին հասցված վնասը վնաս է՝ ուղղված ողջ մարդկությանը»[28]: Մշակութային ժառան-

---

23 Տե՛ս Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փորձագիտական խումբ, Մասնագիտական կարծիք Արցախյան հակամարտության և ադրբեջանական հանրապետության կողմից թույլ տրված միջազգային իրավունքի խախտումների վերաբերյալ, ք. Երևան, 2017 թ., էջ 15, https://advocates.am/images/haytararutyunneri_fayler/2017/Masnagitakan_kartsiq.pdf (մուտք՝ 15.12.2020):

24 International Criminal Court, Statement of the Prosecutor of the International Criminal Court, Fatou Bensouda, at the Opening of Trial in the Case Against Mr Ahmad Al-Faqi Al Mahdi, 22 August 2016, https://www.icc-cpi.int/legalAidConsultations-?name=otp-stat-al-mahdi-160822, United Nations General Assembly, Report of the Special Rapporteur on Minority Issues on Her Mission to Iraq, 9 January 2017, A/HRC/34/53/Add. 1, p. 16.

25 Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փորձագիտական խումբ, նշվ. աշխ., էջ 15:

26 Պատմական ու մշակութային բազմաթիվ կառույցներ են անցել Ադրբեջանի վերահսկողության տակ, որոնց պաշտպանությանը և այլ մանրամասների պետք է անդրադառնալ առանձին:

27 Տե՛ս Culture Under Fire: Armed Non-State Actors And Cultural Heritage In Wartime, Geneva Call, October 2018, էջ 1-62, https://genevacall.org/wp-content/uploads/2017/10/Cultural_Heritage_Study_Final.pdf (մուտք՝ 21.05.2021):

28 **Papaioannou K.**, The International Law On The Protection Of Cultural Heritage, IJASOS- International E-Journal of Advances in Social Sciences, Vol. III, Issue 7, April 2017, էջ 5,

գության պաշտպանությունը բխում է մարդու իրավունքներն ամրագրող պայմանագրերից և ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մշակութային ժառանգությանը վերաբերող բազմաթիվ կոնվենցիաների դրույթներից[29]: Եվ ինչպես նշում են Ռ. Կոֆֆեն և այլք, անկախ նրանից, թե ինչ տեսք ունի մշակութային ժառանգությունը կամ ինչ զգացողություններ է առաջացնում թշնամու մոտ, այն պետք է պահպանվի[30]:

Ինչպես գիտենք, զինված բախումների ժամանակ գործող մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիաների ու պայմանագրերի անդամ են թե՛ Հայաստանը և թե՛ Ադրբեջանը, իսկ Արցախը՝ ոչ, բայց այս դեպքում գործում են մշակութային ժառանգության պաշտպանության սովորութային նորմերը[31] և միջազգային մարդասիրական իրավունքը, որոնք գործում են առանց նախապայմանների, ուստի Արցախի օկուպացված տարածքներում առկա ժառանգությունը իրավականորեն և միջազգայնորեն պաշտպանված է:

2. Ադրբեջանի կողմից հայկական մշակութային արժեքների ոչնչացման մեխանիզմները

Ադրբեջանը, հակահայկական մշակութային վանդալիզմը դարձնելով պետական քաղաքականության անբաժան մաս, Արցախի օկուպացված տարածքներում շարունակաբար ոչնչացնում, ավերում, պղծում, անվանափոխում է հայկական մշակութային արժեքները: Ինչպես նշում է Արցախի մշակութային ժառանգության լավագույն գիտակ, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը, Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության բռնայուրացման մեխանիզմներից էր այն, որ քանդվում, ձևափոխվում, վերապրոֆիլավորվում էին հայկական մշակութային արժեքները, ժառանգության հետազոտության հանրապետական մենաշնորհը պատկանում էր ադրբեջանական գիտական հանրույթին, որի հիմնական թեզը հայկական ողջ ժառանգությունը ադրբեջանական-աղվանական հայտա-

https://pdfs.semanticscholar.org/803e/f40aad6e9296da3e254767aefd8164ed416a.pdf?_ga=2.41082086.575541654.1606964493-575447221.1602582236 (մուտք՝ 21.05.2021):

29 Ինչպես, օրինակ՝ UN covenants – i.e., The International Covenant on Civil and Political Rights, 999 UNTS 171, 16 December 1966 (entered into force 23 March 1976) (ICCPR), and International Covenant on Economic, Social and Cultural Rights, 993 UNTS 3, 16 December 1966 (entered into force 3 January 1976) (ICESCR):

30 Մշակութային ժառանգությունն իր նշանակությունը ձեռք է բերում նախ և առաջ այն պետության համար, որի տարածքում գտնվում է, այն հասարակության ու ժողովրդի համար, որտեղ այն արժևորվում է (տե՛ս **Roger O'Keefe, Camille Péron, Tofig Musayev, Gianluca Ferrari,** Protection of Cultural Property Military Manual Unesco, 2016, պարագրաֆ 46-48):

31 Մարդասիրական իրավունքը միջազգային իրավունքի մաս է, որի առաջնային նպատակն է պաշտպանել անհատների կյանքը և հետևաբար նաև մարդու ստեղծագործ մտքի արտահայտությունը՝ մշակութային ժառանգությունը (տե՛ս **Toman J.**, The Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, Aldershot/Paris, 1996, Dartmouth/UNESCO):

ՀՀ Համահայկական կուսակցություն, ԺԴ (ԺԹ) տարի, թիվ 3(75), հուլիս-սեպտեմբեր, 2021

բարելն էր[32]: Արցախի մշակութային ժառանգության հանդեպ բացահայտ անհանդուրժողական վերաբերմունքն այսօր դրսևորման բազմաթիվ եղանակներ ունի, բայց մենք կառանձնացնենք դրանցից մի քանիսը:

ա) մշակութային ժառանգության ավերում, ոչնչացում

Ադրբեջանը, բացահայտորեն խախտելով հետպատերազմյան իրավիճակում օկուպացված տարածքներում մշակութային ժառանգությունը հարգելու (չոչնչացնելու) Հաագայի և Ժնևի հիմնարար սկզբունքները, ինչպես նաև միջազգային իրավունքի սովորութային նորմերը, բացահայտ անհանդուրժողականություն է ցուցաբերում հատկապես քրիստոնեական կառույցների նկատմամբ: Մասնավորապես, օկուպացված Շուշիում նրանք ավերել են Կանաչ ժամի՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթն ու զանգակատունը[33]:

Մշակութային ժառանգության ոչնչացման հաջորդ դեպքը, որին անդրադարձել է նաև «BBC World News» լրատվամիջոցը, Ջեբրայիլ (Մեխակավան) բնակավայրում Ջորավար Սբ. Աստվածածին քրիստոնեական եկեղեցու հիմնահատակ ավերումն է[34], իսկ մինչ այդ ադրբեջանցիները տապալել էին տանիքի խաչը և մահմեդական աղոթք արել՝ խախտելով քրիստոնեական կառույցի ծիսական գործառույթը՝ հարված հասցնելով նաև կառույցի ոչ նյութական արժեքներին:

Արցախի քրիստոնեական ժառանգության դեմ ուղղված վանդալիզմի հաջորդ դեպքը Ջեբրայիլի շրջանի Շյուքյուրբեյլի գյուղում տուֆե խաչային հորինվածքով հուշարձանի ոչնչացումն էր՝ «Խաչ քո ապավեն մեզ եղիցի»[35] արձանագրությամբ: Բացի դա, Ադրբեջանի կողմից օկուպացված Հադրութի Առաքել գյուղում գինված ադրբեջանցի զինվորականները հատուկ մեքենայի օգնությամբ ոչնչացրել են նաև հայկական մշակութային արժեք համարվող խաչքարը[36]: Եվ քանի որ սկսած 2010 թվականից «Հայկական խաչքարային արվեստը. խաչքարերի խորհրդաբանությունն ու արհեստագործությունը» որպես ոչ նյութական մշակութային ժառանգության բացառիկ դրսևորում ներառված է մարդկության «Ոչ նյութական

---

32 Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Մշակութային էթնոցիդն Արցախում (մշակութային ժառանգության բռնայուրացման մեխանիզմը), Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Շուշի, 2010, էջ 137-148:

33 Տե՛ս «Ադրբեջանցիները ավերել են Շուշիի Կանաչ ժամ՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթն ու զանգակատունը», https://monumentwatch.org/hy/alerts (մուտք՝ 21.06.2021):

34 Տե՛ս Nagorno-Karabakh: The mystery of the missing church, https://www.bbc.com/news/av/world-europe-56530604 (մուտք՝ 21.06.2021):

35 İşğaldan azad olunan Cəbrayıl rayonunun Şükürbəyli kəndi, Azərbaycan Respublikası Müdafiə Nazirliyi, https://www.youtube.com/watch?v=uuJ0-bxibvU (մուտք՝ 21.08.2021).

36 Տե՛ս ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Անանա Նաղդալյանի հրապարակումը «Թվիթեր»-ում, https://twitter.com/naghdalyan/status/1348922661318103040?ref_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E1348922661318103040%7Ctwgr%5E%7Ctwcon%5Es1_&ref_url=https%3A%2F%2Fyerkirmedia.am%2Fhy%2Farticle%2F2021%2F01%2F12%2F31680 (մուտք՝ 20.08.2021):

մշակութային ժառանգության ցանկում»[37], ուստի համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» 2003 թ. կոնվենցիայի, պատերազմների ժամանակ և դրանից հետո կրում է լրացուցիչ և ուժեղացված պաշտպանություն, իսկ այդպիսի արժեքների ոչնչացումը՝ համարվում է ողջ մարդկության դեմ ուղղված միջազգային հանցագործություն: Թիրախավորելով արցախահայության քրիստոնեական ժառանգության խորհրդանիշ խաչը՝ Ադրբեջանը խախտում է նաև 2001 թ. «Մշակութային բազմազանության պաշտպանության մասին» և 2005 թ. «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիաների դրույթները, որոնց անդամ է: Այսպիսի քաղաքականությունը խտրական վերաբերմունք է, որը խախտում է նաև «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով» ամրագրված մտքի, խղճի, դավանանքի ազատությունը և այդ ազատության հետևանքով ստեղծված ժառանգությունը:

Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում ադրբեջանցիները առանձնակի վայրագություններ են կատարում նաև հայկական այն հուշարձանների նկատմամբ, որոնք նվիրված են Արցախյան ազատամարտին և դրա հերոսներին, ինչի նպատակը թերևս է՛լ ավելի պարզ է՝ ջնջել հաղթանակի փաստը արցախահայերի հիշողությունից: Այդ քաղաքականության հետևանքով Շուշիում քանդվել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, որը տեղադրվել էր Արցախյան առաջին պատերազմից հետո և նվիրված էր նաև Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին[38]: Ադրբեջանցի զինծառայողի թիրախում է հայտնվել Հադրութի ազատամարտիկների հուշահամալիրը, որը կրակահերթ է արձակել հուշահամալիրի խաչքարի ուղղությամբ[39]: Օկուպացված Հադրութի Ազոխ գյուղում ադրբեջանցիներն ավերել են նաև երեք առանձին հուշարձաններ՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի, Արցախյան առաջին պատերազմի և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին[40]: Իսկ Որոտան քաղաքում (Կուբաթլու) ադրբեջանցի զինվորականի կողմից ջարդուփշուր է արվել նաև Արցախյան առաջին ազատամարտին նվիրված խաչքարը[41]:

37 Տե՛ս Armenian cross-stones art. Symbolism and craftsmanship of Khachkars, UNESCO, 2010, https://ich.unesco.org/en/-state/armenia-AM?info=elements-on-the-lists (մուտք՝ 20.08.2021):

38 Տե՛ս «Շուշիում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի ավերումը», https://monumentwatch.org/hy/alerts (մուտք՝ 21.06.2021):

39 Տե՛ս «Հադրութի ազատամարտիկների հուշահամալիրի ավերումը», https://monumentwatch.org/hy/alerts (մուտք՝ 02.08.2021):

40 Տե՛ս «Азербайджан разрушил мемориальный комплекс ВОВ и Первой Арцахской войны в Азохе», Военные преступления Азербайджана, https://war.karabakhrecords.info/ru/2021/08/18/azerbaijan-destroyed-the-memorial--complex-of-the-second-world-war-and-the-first-artsakh-war-in-azokh/ (մուտք՝ 20.08.2021):

41 Տե՛ս "Church and memorial desecration in post-ceasefire Nagorno Karabakh", https://medium.com/dfrlab/church-and-memorial-desecration-in-post-ceasefire-nagorno-karabakh-87ece968af3f (մուտք՝ 20.08.2021):

Ադրբեջանի մշակութային էթնոցիդի գործողությունների թիրախում է հայտնվել նաև Շուշիի պատմական գերեզմանոցը, որի տեղում կառուցվել է նոր շինություն[42]: Նրանք ավերել և հողին են հավասարեցրել նաև Ասկերանի շրջանի Շոշ համայնքի Սղնախի 18-րդ դարի հայկական գերեզմանոցը[43]: Ըստ ադրբեջանական լրատվական աղբյուրների՝ պատմական գերեզմանոցի տարածքում կառուցվում է թունել, որը ադրբեջանական տրանսպորտային միասնական համակարգի անբաժանելի մասն է[44]: Մշակութային ժառանգության ոչնչացման օրինակներ են նաև Զանգելանում խաչով հուշարձանի, Մատաղիսի և Թալիշի նոր հուշարձանների ավերումները[45]: Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի՝ «Վերածնված Թալիշ» հուշարձանը 44-օրյա պատերազմից հետո ադրբեջանցիների կողմից ևս ավերվել է[46]:

Բարբարոսություններ են կատարվել զոհված ազատամարտիկների գերեզմանոցների նկատմամբ. ադրբեջանցիները կոտրել ու տապալել են Տող գյուղում գտնվող Երկրորդ աշխարհամարտին նվիրված հուշարձանի տարածքում ամփոփված՝ Արցախյան ազատամարտի ականավոր գործիչների գերեզմանները: Հողին է հավասարեցվել Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղի գերեզմանոցը: Ավերվել են Թալիշ, Քարին տակ, Մոխրենես, սրբապղծվել՝ Ջարդանաշեն, Ավետարանոց գյուղերի Արցախյան ազատամարտին նվիրված հուշակոթողները, ինչպես նաև ավերվել են առանձին խաչքարեր տարբեր գյուղերում[47]:

Բացի դա՝ հարկ է նշել, որ Ադրբեջանի կողմից հատուկ թիրախավորվում են և ոչնչացվում են նաև այն հուշարձաններն ու համալիրները, որոնք նվիրված են Հայրենական Մեծ պատերազմին, նրա հերոսներին և պատերազմում զոհվածների հիշատակին: Որպես օրինակ կարելի է նշել Արցախի Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում գտնվող ԽՍՀՄ ավիացիայի մարշալ, ծնունդով արցախցի Արմենակ Խանփերյանցի (Սերգեյ Խուդյակով) կիսանդրու և տուն-թանգարանի տարածքում գտնվող «ՄիԳ-17» կործանիչի ոչնչացումը[48]: Օկուպացված Շուշիում ադրբեջանական վայրագությունների թիրախում է հայտնվել նաև ԽՍՀՄ պետական-քաղաքական գործիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, բնիկ շուշեցի Հովհաննես (Իվան) Թևոսյանի կիսանդրին, որը ադրբեջանցի զինվորականները

42 Վանդալիզմի այս գործողության մասին փաստում են «Caucasus Heritage Watch»-ի արած արբանյակային լուսանկարները:

43 Տե՛ս «Սղնախի գերեզմանոցի ավերումը», https://monumentwatch.org/hy/alerts (մուտք՝ 21.06.2021):

44 Տե՛ս «Единая транспортная концепция Карабаха», CBC TV Azerbaijan, https://www.youtube.com/watch?v=RSPsWr5Ftog (մուտք՝ 21.08.2021):

45 Տե՛ս Rena Guseyn-zade-ի հրապարակումը, https://www.facebook.com/rena.quseynzade/posts/3443529142348890 (մուտք՝ 15.06.2021):

46 Տե՛ս Kirill Krivosheev-ի 2020 թ. դեկտեմբերի 3-ի հրապարակումը, https://archive.is/PkeTz (մուտք՝ 21.08.2021):

47 Տե՛ս «Artsakh Monuments»-ի հրապարակումը, https://m.facebook.com/artsakh.monuments/posts/1573895339473203 (մուտք՝ 15.06.2021):

48 Տե՛ս «Արցախում ադրբեջանցիները ոչնչացրել են ԽՍՀՄ մարշալ Խանփերյանցի արձանը և կողաշրջել նրա «ՄիԳ-17» կործանիչը», https://war.karabakhrecords.info/2021/08/20/in-artsakh-azerbaijanis-destroyed-the-statue-of-marshal-khudyakov/ (մուտք՝ 21.08.2021):

պղծել, քանդել և գետնին են տապալել[49]: Ադրբեջանցիների կողմից գետնին է տապալվել և ոչնչացվել նաև օկուպացված Հադրութի շրջանի Տումի գյուղի «Սիսեռ» աղբյուրի մոտ գտնվող հայ Ազգային հերոս, պետական և ռազմական գործիչ Թևան Ստեփանյանի կիսանդրին: Իսկ 2020 թ. նոյեմբերի 9-ի կրակի դադարեցման մասին հայտարարությունից հետո ադրբեջանցի զինվորականների կողմից վանդալիզմի գործողությունների էր ենթարկվել[50] նաև Արցախի Շուշի քաղաքում գտնվող Հայաստանի և Արցախի ազգային հերոս, սպարապետ Վազգեն Սարգսյանի արձանը[51], որը հետագայում արդեն գլխատվել և ոչնչացվել է[52]: Սա Ադրբեջանի կողմից Արցախի պատմության, հաղթանակի հիշողության կորսմանն ուղղված հատուկ ծրագրված պետական քաղաքականություն է, որով փուլ առ փուլ ավերվում են Արցախյան ազատամարտի հաղթանակից հետո տեղադրված հուշարձանները:

Մշակութային ժառանգության ոչնչացման հաջորդ դրսևորումը կապված է Շուշիի երկրագիտական թանգարանի հետ, որը հայտնվելով ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ՝ պատերազմից հետո կրել է լուրջ վնասներ. մասնավորապես ամբողջությամբ ավերվել է թանգարանի շինության տանիքը, վնասվել, ջարդվել, քանդվել և տակնուվրա են արվել օգտակար հանածոների ցուցահանդեսային տաղավարի ցուցանմուշները, տաղավարի ցուցափեղկերը[53]: Ադրբեջանի կողմից մշակութային ժառանգության ոչնչացման հաջորդ դեպքը Շուշիի կերպարվեստի պետական թանգարանին կից «Քանդակների պուրակում» տեղակայված 51 քանդակների[54] անհետացումն է: Երբեմնի մշակութային ժառանգության բացառիկ նմուշներով հագեցված պուրակի տարածքն ամբողջությամբ մաքրվել է, իսկ քանդակների ճակատագիրը մնացել անհայտ[55]: Ինչպես նշված է «Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. կոնվենցիայի նախաբանում, մշակութային ժառանգության ոչնչացման ցանկացած դեպք, ուղղված է ոչ միայն

49 Տե՛ս «Շուշիում ադրբեջանցի վանդալները պղծել են Հովհաննես Թևոսյանի կիսանդրին», https://armeniasputnik.am/karabah/20210304/26685429/shushi-vandalizm-xshm-gorcich-hovhannes-tevosyan.html (մուտք՝ 04.03.2021):

50 Տե՛ս «Շուշիում պղծել են Սպարապետի հուշարձանը», https://yerkirmedia.am/hy/article/2020/11/18/27728/ (մուտք՝ 18.11.2020):

51 Տե՛ս «Ադրբեջանական ԶՈՒ-ն շարունակում է «պատերազմը» հայկական պատմամշակութային ժառանգության դեմ, նշում է ԱԳՆ-ն», https://www.azatutyun.am/a/30959075.html (մուտք՝ 19.11.2020):

52 Տե՛ս «Շուշիում ադրբեջանցիները պղծել ու գլխատել են սպարապետ Վազգեն Սարգսյանի արձանը», https://iravunk.com/?p=191732 (մուտք՝ 21.06.2021):

53 Տե՛ս https://t.me/ararathau/9676 (մուտք՝ 20.08.2021):

54 Աշխարհի տարբեր երկրներից՝ Իտալիայից, Բելգիայից, Բելառուսից, Եգիպտոսից, Ռուսաստանի Դաշնությունից, Հնդկաստանից, Չինաստանից, Լեհաստանից, Սերբիայից, ԱՄՆ-ից, Խորվաթիայից, Ճապոնիայից, Հայաստանից և Արցախից, 37 քանդակագործների 62 քանդակները (որոնցից 51-ը գտնվում էին պուրակում, իսկ մնացածը՝ Արցախի այլ շրջաններում) ստեղծվել են հենց Արցախում և նվիրվել Արցախի ժողովրդին (տե՛ս «Քանդակների պուրակի բացումը Շուշիում», https://www.artsakhtert.com/arm/index.php/culture-and-education/item/27159-2019-07-22-16-02-03 (մուտք՝ 20.08.2021)):

55 Տե՛ս «Շուշիի կերպարվեստի թանգարանի «Քանդակների պուրակի» ավերումը», https://monumentwatch.org/hy/alerts/ (մուտք՝ 18.08.2021):

տվյալ ժողովրդին, ում այն պատկանում է, այլև ողջ մարդկությանը[56]: Ուստի «Քանդակների պուրակի» ոչնչացման այս դեպքը հարված է ուղղված ոչ միայն արցախահայության ժառանգությանը, այլև ողջ մարդկությանը, քանզի յուրաքանչյուր ժողովուրդ իր ներդրումն ունի համաշխարհային մշակութային բազմազանության մեջ և յուրաքանչյուր ժառանգության կորստով այն շարունակ աղքատանում է:

Ըստ «Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. կոնվենցիայի և դրան կից առաջին արձանագրության՝ գրավյալ տարածքներում դրանք նվաճած պետությունը պարտավոր է արգելել, կանխել և, եթե անհրաժեշտ է, խափանել մշակութային արժեքների գողության, կողոպուտի կամ ապօրինի յուրացման, ինչպես նաև դրանց նկատմամբ վանդալիզմի ցանկացած գործողություն: Իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿՕՄՕՍ-ի և այլ փաստաթղթեր արգելում են մշակութային ժառանգության ձևի, տարրերի, դրանց գործառույթի, արտաքին և ներքին ցանկացած փոփոխություն, որոնք խաթարում են մշակութային ժառանգության պահպանության, իսկության, ամբողջականության, կարևորության և բացառիկության միջազգային հիմնարար սկզբունքները:

Շատ հեղինակներ պնդում են, որ ժառանգությունը հենց հիշողությունն է: Այս կապակցությամբ հարկ է հիշեցնել, որ 1954 թ. Հաագայի կոնվենցիան, որը նաև մյուս միջազգային պայմանագրերի հիմքն է, իր առաջին հոդվածով սահմանում է, որ մշակութային արժեքը, «Անկախ ծագումից կամ սեփականատիրոջից, յուրաքանչյուր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ ժառանգությունն է»[57]: Դրանում հստակ ընդգծվում է, որ «մշակութային արժեքը» կախված չէ իր ծագման փաստից, ժամանակային որևէ սահմանափակում չունի (նո՞ր է, թե՞ հին), բայց հստակ է, որ այդ ժառանգության արժեքը որոշում է տվյալ ժողովուրդը, այս դեպքում՝ արցախահայությունը: Եվ անկախ նրանից, թե ինչ տեսք ունի այն կամ ինչ զգացողություններ է առաջացնում թշնամու մոտ, պետք է պահպանվի: Հարկ է ընդգծել, որ նյութական ժառանգությունը չի կարող մեկուսացված լինել. մշակութային ժառանգությունը նյութականի և ոչ նյութականի ամբողջություն է, որոնց բաղադրիչները սերտորեն փոխկապակցված են, և մի բաղադրիչի վրա հարձակումները նույն ավերիչ ուժով ազդում են նաև մյուսի վրա: Եվ տվյալ դեպքում, եթե հաշվի առնենք,

56 Տե՛ս Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict with Regulations for the Execution of the Convention 1954. The High Contracting Parties, Preamble Being convinced that damage to cultural property belonging to any people whatsoever means damage to the cultural heritage of all mankind, since each people makes its contribution to the culture of the world. http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13637&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html (մուտք՝ 18.08.2021):

57 Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict with Regulations for the Execution of the Convention, Chapter I. General provisions regarding protection Article 1 – Definition of cultural property, http://www.-unesco.org/new/fileadmin/MULTIMEDIA/HQ/CLT/pdf/1954_Convention_EN_2020.pdf (մուտք՝ 21.06.2021):

որ արցախահայության ոչ նյութական մշակութային ժառանգության՝ գիտելիքների, հմտությունների, պատկերացումների, որոշակի արժեքային համակարգի հիման վրա է ստեղծվել, դիցուք, Շուշիի՝ Արցախյան ազատամարտին նվիրված հուշարձանը, ստացվում է, որ այն ներառում է նաև ոչ նյութականի տարրեր և արցախահայության հավաքական մտքի արտահայտություն է: Այս պարագայում այն պաշտպանվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայով: Հավելենք, որ տվյալ հուշարձանները պաշտպանվում են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ կոնվենցիաներով՝ 2001 թ. «Մշակութային բազմազանության պաշտպանության մասին» և 2005 թ. «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիաներով, քանզի դրանք մշակութային բազմազանության արդյունք են, որոնք ստեղծվել են եզակի համայնքի (արցախահայության) կողմից: Բայց անհրաժեշտ է հիշեցնել, որ մշակութային ժառանգության ոչ նյութական արժեքները ևս պաշտպանվում են «Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության» կոնվենցիայով, ժնևի կոնվենցիաներով ու արձանագրություններով և ամենանշանակալից պաշտպանությունն են գտնում մարդու հումանիտար իրավունքների շրջանակներում:

Բացի այդ՝ 2005 թ. հոկտեմբերի 13-ին Ֆարոյում (Պորտուգալիա) ԵՄ նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար» կոնվենցիան ևս շեշտում է, որ մշակութային ժառանգության նշանակությունը որոշում է տվյալ համայնքը, և ցանկացած արժեք, որը տվյալ ժողովրդի հավաքական մտքի արտահայտությունն է, պետք է պահպանվի:

Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման և վանդալիզմի դեպքերը ակնհայտորեն խախտում են արցախահայության՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, որը հաստատված է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից: Իրավական տեսանկյունից Ադրբեջանը խախտել է նաև 1966 թ. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի» 15-րդ հոդվածը, որը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, ինչպես նաև «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 27-րդ հոդվածը: Հիշեցնենք նաև, որ մարդու իրավունքների միջազգային օրենսդրությունը չի դադարում զինված հակամարտությունների ժամանակ կիրառվելուց[58]:

58 Տե՛ս **Roger O'Keefe, Camille Péron, Tofig Musayev, Gianluca Ferrari**, նշվ. աշխ., 2006, պարագրաֆ 52-62:

բ) մշակութային ժառանգության օգտագործումը ռազմական նպատակներով

Մշակութային ժառանգությանը վնասում է նաև դրա օգտագործումը ռազմական նպատակներով: Պատերազմից հետո օկուպացված Հադրութի Տող գյուղի Կատարո եկեղեցին ադրբեջանական զինված ուժերի կողմից վերածվել է զինվորական ապաստարանի, որտեղ պահվում է զենք-զինամթերք[59]: Հարկ է նշել, որ, ըստ «Զինված հակամարտության ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թ. կոնվենցիայի և լրացուցիչ՝ 1954 թ. և 1999 թ. արձանագրությունների, արգելվում է կոնվենցիայով սահմանված մշակութային արժեքը օգտագործել ռազմական նպատակներով: Հաագայի 1999 թ. երկրորդ արձանագրության 6-րդ հոդվածը շեշտում է, որ արգելվում է մշակութային արժեքները վերածել ռազմական օբյեկտների կամ օգտագործել այնպիսի նպատակներով, որոնք կարող են դրանք ավերվելու կամ վնասվելու վտանգի ենթարկել: Իսկ երկրորդ արձանագրության 15-րդ հոդվածի գ) և դ) կետերով այդպիսի արարքը որակվում է որպես ռազմական հանցագործություն: Երբ մշակութային ժառանգությունը օգտագործվում է ռազմական նպատակներով, զրկվում է վերոնշյալ կոնվենցիայով սահմանված իր լրացուցիչ պաշտպանությունից և դառնում քաղաքացիական օբյեկտ[60]: Ըստ ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիայի առաջին արձանագրության, որը վերաբերում է միջազգային զինված բախումներին, իսկ երկրորդը՝ ոչ միջազգային (քաղաքացիական կամ ահաբեկչական), մշակութային արժեքը «քաղաքացիական օբյեկտ է», և «արգելվում է այդպիսի ժառանգությունը օգտագործել ռազմական նպատակներով կամ դիտավորյալ հարձակվել դրա վրա»[61]: Լրացուցիչ արձանագրության 53-րդ հոդվածում ընդգծվում է, որ, «Չխախտելով Հաագայի 1954 թ. մայիսի 14-ին ընդունված կոնվենցիայի դրույթները, արգելվում է մշակութային ժառանգության դեմ կատարել թշնամական ցանկացած գործողություն, ռազմական նպատակներով օգտագործել այն կամ հաշվեհարդարի առարկա դարձնել[62]:

---

59 Տե՛ս «Կատարո վանքի եկեղեցու օգտագործումը ռազմական նպատակներով», https://monumentwatch.org/alerts/ (մուտք՝ 21.06.2021):

60 Տե՛ս Հաագայի «Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. կոնվենցիա, հոդված 4:

61 Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I), 8 June 1977, article 53, file:///C:/Users/User/Downloads/AP-I-EN.pdf (մուտք՝ 10.08.2021); Second Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and Relating to the Protection of Victims of Non-International Armed Conflicts (Protocol II), articles 9, 16, https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/protocolii.aspx (մուտք՝ 10.08.2021).

62 Տե՛ս Practical advice for the protection of cultural property in the event of armed conflict, The Hague Convention of 14 May 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict and its Protocols, Protection of Cultural Property in the Event of Armed Conflict Report on the Meeting of Experts, Geneva, 5-6 October 2000, էջ 154-161, file:///C:/Users/User/Downloads/cutural-property-report-icrc_002_0805%20(3).pdf (մուտք՝ 20.06.2021):

գ) մշակութային ժառանգության գործառույթի փոփոխումը որպես ոչ նյութական ժառանգությանը հասցված վնաս

Արցախի Կատարո եկեղեցին զինապահեստ և զինվորների հավաքատեղի դարձնելով՝ Ադրբեջանը հարված է հասցրել նաև այդ ժառանգության ոչ նյութական արժեքներին, քանզի փոխվել է քրիստոնեական կառույցի ծիսական գործառույթը: Ադրբեջանցի զինվորականները փոխել են նաև 1882 թվականին հիմնադրված Արցախի Ասկերանի շրջանի Ջրաղացներ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու քրիստոնեական գործառույթը և այն վերածել մահմեդական աղոթարանի[63]: Նամազ է կատարվել նաև Արցախի Սուրբ Եղիշե եկեղեցում: Բացի ֆիզիկական վնասից՝ ադրբեջանցիների կողմից հարված է հասցվել նաև Կանաչ ժամ քրիստոնեական կառույցի ոչ նյութական արժեքին՝ համարելով այն ռուս ուղղափառ, և անօրինական ծիսակատարություններով պղծվել և վերափոխվել է Հայ առաքելական եկեղեցու հիմնական գործառույթը:

Գործառույթի նման փոփոխությունները ենթադրում են զգալի վնաս՝ հասցված ժառանգության ոչ նյութական բաղադրիչին, ինչպիսիք են տվյալ ժառանգության վերաբերյալ գիտելիքն ու պատմությունը, որոնք դրան իմաստ ու արժեք են տալիս: Հարկ է նշել, որ Հաագայի 1954 թ. կոնվենցիայի 1999 թ. երկրորդ լրացուցիչ արձանագրության 9-րդ հոդվածի գ) կետով արգելվում է մշակութային արժեքի օգտագործման ձևի փոփոխությունը, որը նպատակ ունի թաքցնելու կամ ոչնչացնելու մշակութային, պատմական կամ գիտական վկայությունները[64]: Նույն հոդվածի ա) և բ) կետերով արգելվում է «մշակութային ապացույցների» ոչնչացումը՝ դրանով իսկ ապահովելով մշակութային ժառանգության պահպանումն ինչպես իր նյութական, այնպես էլ ոչ նյութական չափումներում:

Մշակութային ժառանգության գործառույթի փոփոխումը խախտում է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիա»-ի դրույթները, որի 11-րդ հոդվածով պետությունները պարտավոր են հարգել ժառանգության ոչ նյութական արժեքները՝ անկախ դրանց ծագումից ու գործառույթից: Ժնևի առաջին արձանագրության 75-րդ հոդվածում նշվում է, որ պատերազմի ընթացքում և դրանից հետո անձինք «օգտվում են նույն հոդվածում նախատեսվող պաշտպանությունից, առանց որևէ աննպաստ տարբերության՝ հիմնված ռասայի, գույքի, սեռի, լեզվի, կրոնի կամ դավանանքի, քաղաքական կամ

63 Տե՛ս «Տելեգրամ» ալիքում «Ararat»-ի հրապարակմամբ, https://t.me/ararathau/8515 (մուտք՝ 19.06.2021):
64 Տե՛ս 1999 Hague Second Protocol, Art. 9(1)(c):

այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ծննդի կամ այլ կարգավիճակի հատկանիշների, կամ որևէ այլ համանման չափանիշների վրա: Յուրաքանչյուր կողմ պետք է հարգանքով վերաբերվի այդպիսի բոլոր անձանց անհատի պատվի, համոզմունքների և կրոնական ծիսակատարությունների նկատմամբ»[65]: Եկեղեցիների գործառույթի փոփոխությունը խախտում է հայ հանրույթի համոզմունքներն ու կրոնական ծիսակատարություններին մասնակցելու իրավունքը (թեկուզ ապագայում): Իսկ Ժնևի կոնվենցիայի 27-րդ հոդվածը հավելում է, որ հովանավորվող անձինք, բացի անհատի, պատվի, ընտանեկան իրավունքի, կրոնական համոզմունքների և ծիսակատարությունների նկատմամբ հարգանքից, ունեն նաև «կենսափորձի և սովորույթների նկատմամբ հարգանքի իրավունք»[66], որը կարող է ընդգրկել ամբողջ ոչ նյութական ժառանգությունը՝ ներառյալ գիտելիքն ու հմտությունները:

դ) Արցախի մշակութային ժառանգության յուրացումը

Մշակութային ժառանգության յուրացման ակնհայտ դրսևորում է Ծակուռի գյուղի քրիստոնեական ժառանգության վերաբերյալ Ալիևի այն հայտարարությունը[67], որ այն աղվանական է: Ադրբեջանը պետք է վերանորոգի կամ վերակառուցի իր կողմից նման եղանակով յուրացվող Ծակուռիի եկեղեցին, որի հայերեն արձանագրություններն ու խաչքարերն իբր կեղծ են: Ադրբեջանը պատրաստվում է վերանորոգելու եկեղեցին՝ նպատակ ունենալով ջնջելու հայկական հետքը, ոչնչացնելու պատմական ճշմարտությունը և վերցնելու այն պետական պահպանության տակ:

Այստեղ թերևս ամենաէական հարցն այն է, թե ինչ է նշանակում ժառանգության պահպանություն: Մշակութային ժառանգության պահպանության միջազգային համակարգում առանձնացվում է ժառանգության պահպանության մի քանի հիմնական չափանիշ՝ իսկությունը (authenticity), ամբողջականությունը (integrity), մշակութային կարևորությունը (cultural significance) և բացառիկությունը (outstanding universal value), որոնք բխում

65 «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից 1977 թվականի լրացուցիչ արձանագրությունը, հոդված 75, http://www.irtek.am/-views/act.aspx?aid=3326 (մուտք՝ 19.06.2021):

66 Տե՛ս 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիան պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին, հոդված 27, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20872 (մուտք՝ 19.06.2021):

67 Տե՛ս Ալիևի հայտարարությունը. «Սա մեր հինավուրց պատմական հուշարձանն է, մեր եղբայր ուդիների տաճարը.... նրանք կգան այստեղ: Ինչպես հայերը պղծեցին մեր մզկիթները, այնպես էլ նրանք պղծեցին աղվանական հին տաճարը, բայց մենք այն կվերականգնենք: Բոլոր այս կեղծված արձանագրությունները (մատով ցույց է տալիս արևմտյան բարավորի շին. արձանագրությունը և խաչը) վերագրվել են ավելի ուշ: Նրանք փորձեցին իրենց համար կեղծ պատմություն ստեղծել մեր հին հողերում, բայց չստացվեց. մենք նրանց բացահայտեցինք: Այն փաստը, որ աղվանական այս տաճարն այս վիճակում է, ևս մեկ անգամ վկայում է հայկական կեղծիքի մասին: Եթե տաճարը հայկական լիներ, այն բարվոք վիճակում կլիներ» (The statement of the president of Azerbaijan on the church of Tsakuri, https://monumentwatch.org/alerts/the-statement-of-the-president-of-azerbaijan-on-the-church-of-tsakuri/ (մուտք՝ 21.06.2021)):

են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության» կոնվենցիայից, ԻԿՕՄՕՍ-ի[68] և այլ միջազգային կառույցների փաստաթղթերից[69]: Իսկության չափանիշները որոշվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1994 թ. Ճապոնիայում ընդունված իսկության վերաբերյալ Նարայի փաստաթղթի միջոցով: Իսկությունը որոշում է մշակութային ժառանգության բնականության սկզբունքները: Դրա հիմքում այն գաղափարն է, որ ժառանգությունը մշակութային իրական ավանդույթի արդյունք է և ստեղծվել է մարդու/համայնքի կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքով[70]: Այս համատեքստում դժվար չէ նկատել, որ Ադրբեջանը, պատմական փաստերը խեղաթյուրելով, ցանկանում է ջնջել Ծակուռի գյուղի եկեղեցու հայկական արձանագրությունները, այսինքն՝ ժառանգության իրական ավանդույթը, որով և տվյալ ժառանգությունը զրկվում է իր իսկության հիմնական չափանիշից: Մշակութային ժառանգության պահպանումը, ըստ Նարայի փաստաթղթի, մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Պահպանություն (conservation) հասկացությունը ենթադրում է մշակութային ժառանգության[71] ընկալման, դրա պատմության և նշանակության գիտակցման, նյութերի պահպանման և ժառանգության հանրահռչակմանը, վերականգնմանն ու հաստատմանն ուղղված գործընթացների ամբողջությունը: Ժառանգությունը հասկանալու մարդկանց կարողությունը մասամբ կախված է նաև ժառանգության վերաբերյալ արժանահավատ և ճշմարիտ գիտելիքից, որի մասին տեղեկատվական աղբյուրների իմացությունն ու ճիշտ ըմբռնումը անհրաժեշտ են ժառանգության իսկության և հավաստիության բոլոր կողմերը գնահատելու համար»[72]: Այս համատեքստում խոսք անգամ չի կարող լինել Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ճիշտ ընկալման և դրա գեղագիտական նշանակության պահպանման մասին[73]: Բայց պարզ է, որ Ադրբեջանը «վերականգնում» ասելով նկատի ունի ոչ թե այդ ժառանգության իրական ավանդույթի ներկայացումը, այլ պատմական ու գիտական իրական վկայությունների ոչնչացումը:

Ժառանգության մշակութային կարևորությունը ամրագրված է Բուրրայի խարտիայում, որը սահմանում է որպես «....գեղագիտական, պատմական, գիտական կամ սոցիալական արժեք անցյալի, ներկայի և ապագա սերունդների

68 Տե՛ս Approaches to the conservation of twentieth-century cultural heritage Madrid – New Delhi document, 2017, ICOMOS international committee on twentieth century heritage, http://www.icomos-isc20c.org/pdf/madrid-new-delhi-document-2017.pdf (մուտք՝ 19.06.2021):

69 Տե՛ս Մշակութային ժառանգության իսկության վերաբերյալ Նարայի փաստաթուղթ, ԻԿՕՄՕՍ, 1994, https://www.-icomos.org/charters/nara-e.pdf (մուտք՝ 19.06.2021):

70 Տե՛ս Nara Document on Authenticity, Report of the Experts Meeting, Summary of ICCROM Position, 1994, Paper, Amsterdam 1998, 1994, էջ 1-3, https://www.icomos.org/charters/nara-e.pdf (մուտք՝ 10.08.2021):

71 Մշակութային ժառանգությունը ներառում է հուշարձաններ, շենքերի համալիր կառույցներ և մշակութային արժեք ներկայացնող վայրեր, ինչպես սահմանված է «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության» կոնվենցիայի 1-ին հոդվածում:

72 Nara Document on Authenticity, 9. Values and authenticity.

73 Տե՛ս Nara Document on Authenticity, Report of the Experts Meeting, Summary of ICCROM Position, 1994:

համար», իսկ ժառանգության պահպանությունը մեկնաբանվում է որպես «....գործընթացների ամբողջություն, որոնք նպաստում են տվյալ արժեքի կամ տարածքի մշակութային կարևորության պահպանմանը»[74]: «Մշակութային ժառանգության կարևորությունը կարող է թաքնված լինել ժառանգության նյութական և ոչ նյութական հատկանիշների մեջ, լինել օգտագործման պատմական, սոցիալական, գիտական կամ հոգևոր եղանակների կամ ստեղծագործական հանճարի և ոչ նյութական արժեքների մեջ»[75]: Այստեղ դժվար չէ նկատել, որ, ժխտելով Ծակուռիի եկեղեցու արձանագրությունների հայկականությունը, առաջ քաշելով խաչքարերի բերված լինելու գաղափարը, այսինքն՝ խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը՝ խաթարվում է նաև ժառանգության պահպանության այս չափանիշը:

Հաջորդ էական չափանիշը ժառանգության ամբողջականությունն է, որը մշակութային տարածքների կամ տեղանքների, դրանց տարրերի և արժեքների ամբողջականության ու անձեռնմխելիության չափն է: Ժառանգությունը կպահպանի իր ամբողջականությունը, եթե գտնվի այն արժևորող համայնքի պահպանության ներքո: Եթե չկա համայնքը, ցեղասպանված է այդ համայնքի մշակութային ինքնությունը, խեղաթյուրված են պատմական փաստերը, ապա խոսք անգամ չի կարող լինել ժառանգության պահպանության մասին:

Արցախի մշակութային ժառանգության յուրացման օրինակ է նաև Դադիվանքի վանական համալիրը աղվանական հռչակելը: Օկուպացված Արցախում ադրբեջանցիները ակնհայտորեն կեղծում, պղծում, յուրացնում, նաև անվանափոխում են Դադիվանքի հայ քրիստոնեական համալիրը՝ այն անվանակոչելով Խուդավենգի համալիր, և համարում աղվանական-ուդիական միջնադարյան կառույց, որն իբր հիմնադրվել է 6–7-րդ դարերում՝ թուրքական պատվերով[76]:

ե) մշակութային ժառանգության պղծում, կողոպուտ, վանդալիզմ

Արցախի օկուպացված Մատաղիսի հյուսիսարևմտյան հատվածում գտնվող 1892–1898 թվականներին կառուցված Սուրբ Եղիշե Առաքյալ եկեղեցին ադրբջանցի զինվորականների կողմից ենթարկվել է վանդալիզմի: Զինվորականները կոտրել են սրբապատկերները և քրիստոնեական կա-

74 Burra Charter, ICOMOS Australia (Burra), Definitions, 1981.
75 Նույն տեղում:
76 Տես «Ադրբեջանը Դադիվանքը հռչակում է աղվանական», https://monumentwatch.org/monitoring-alerts/ (մուտք՝ 21.06.2021):

ռույցում նամազ կատարել[77]: Ադրբեջանցի զինվորականների կողմից վանդալիզմի է ենթարկվել նաև (ներկվել է կարմիր ներկով) օկուպացված Արցախի Ակնաղբյուր գյուղի հուշարձանը[78]: Ադրբեջանի կողմից մշակութային ժառանգության դեմ իրականացված վանդալիզմի գործողությունները արգելված են Հաագայի և Ժնևի՝ զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիաների և համապատասխան արձանագրությունների մի շարք դրույթներով: Ակնաղբյուրի հուշարձանի պղծումը ևս խտրական վերաբերմունք է արցախահայության կրոնական ժառանգության նկատմամբ, որը պաշտպանված է նաև «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ հոդվածով: Դրանում նշվում է, որ պետությունները պարտավոր են հարգել ժառանգման մտքի, խղճի և կրոնի ազատության, համոզմունքների ազատության և ազատ արտահայտվելու մշակութային իրավունքները և այդ իրավունքների իրացման հետևանքով ստեղծված ժառանգությունը:

զ) մշակութային ժառանգության մասնակի ավերում, յուրացում

Ադրբեջանցիները «վերականգնման» շինարարական մեծածավալ գործողություններ են իրականացնում Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում. քանդել են գմբեթը[79], դեպի Ղազանչեցոցի բակ տանող դարպասների վրայից հանել են խաչերը, իսկ դարպասի եզրաքարերից՝ հրեշտակների քանդակները:

Նախ նշենք, որ սա Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու հանդեպ բարբարոսության առաջին դեպքը չէ, քանզի, խախտելով մշակութային ժառանգության անձեռնմխելիության միջազգային սովորութային (ռազմական անհրաժեշտության, համաչափության, տարբերակման, նախազգուշության միջազգային սկզբունքները) և կոնվենցիոնալ դրույթները, դեռևս պատերազմի ժամանակ՝ 2020 թ. հոկտեմբերի 8-ին, Ադրբեջանի զինված ուժերը ուղղակի նշանառությամբ երկու անգամ հրթիռակոծեցին եկեղեցին, ինչի հետևանքով վնասվեցին եկեղեցու գմբեթը, ինչպես նաև արտաքին ու ներքին հատվածներ: Հիշեցնենք, որ, բացի Հաագայի և Ժնևի կոնվենցիաներից ու դրանց լրացուցիչ արձանագրությունների դրույթնե-

77 Տե՛ս «Մշակութային վանդալիզմ Մատաղիսի Սուրբ Եղիշե եկեղեցում», https://monumentwatch.org/monitoring-alerts/ (մուտք՝ 21.06.2021):

78 Տե՛ս «Ակնաղբյուր. Արցախյան առաջին պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի պղծում», https://monumentwatch.org/monitoring-alerts/ (մուտք՝ 21.06.2021):

79 Տե՛ս «Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու անօրինական վերականգնումները», https://monumentwatch.org/-monitoring-alerts/ (մուտք՝ 21.06.2021):

ից, Ադրբեջանը այս քայլով արդեն իսկ խախտել էր միջազգային սովորութային իրավունքը և «Միջազգային մարդասիրական օրենք»-ի հիմնական պայմանագրերը, ըստ որոնց՝ պատերազմի ժամանակ և դրանից հետո մշակութային արժեքների թիրախավորումը ռազմական գործողություններում օրինական չէ: Հարկ է նշել, որ զինված հակամարտության միջազգային սովորութային օրենքների կիրառելիությունը չի կարող վիճարկվել ոչ մի պետության կողմից: Պետք է շեշտել, որ միջազգային մարդասիրական իրավունքի փաստաթղթերը պարտադրում են մշակութային արժեքները պաշտպանել հակամարտության երկու կողմերին, այսինքն՝ ինչպես մշակութային արժեքը վերահսկող կողմին (այս դեպքում՝ Ադրբեջանին), այնպես էլ հակառակ կողմին[80]:

Բացի այդ՝ ադրբեջանական օկուպացիայից հետո ադրբեջանական կողմը «շինարարական» ինչ-որ աշխատանքներ է տանում «Թուխնակալ» ապարանքի համալիրի մոտակայքում, և բուլդոզերների միջոցով հողի հարթեցման աշխատանքները հասել են համալիրի պահպանական գոտուն[81]: Ադրբեջանի կողմից Արցախի օկուպացված տարածքներում հայկական մշակութային ժառանգության ֆիզիկական ոչնչացման, բռնայուրացման, անվանափոխման, վերօգտագործման, գործառույթի փոփոխման այս և շատ այլ օրինակներ վկայում են այն մասին, որ ադրբեջանական վայրագությունների թիրախում են հայտնվում ոչ միայն քրիստոնեական կառույցները, խաչքարերը, հայերեն արձանագիր հուշարձանները, պատմական գերեզմանոցներն ու այլ արժեքներ, այլև վերջին 30 տարիներին ստեղծված մերօրյա արժեքները, Արցախյան ազատամարտին և Հայրենական Մեծ պատերազմին նվիրված հուշարձաններն ու հուշահամալիրները, որոնք, հատկապես վերջին շրջանում, Ադրբեջանի կողմից մշակութային ցեղասպանության ահագնացման պայմաններում ունեն միջազգային իրավական պաշտպանության և հոգածության կարիք:

Ստորև կներկայացնենք Արցախի գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային իրավական մեխանիզմները՝ ըստ հիմնական միջազգային փաստաթղթերի, որոնք կարող են ադրբեջանական ագրեսիայից պաշտպանել հայկական մշակութային արժեքները:

80 Տե՛ս Practical advice for the protection of cultural property in the event of armed conflict, The Hague Convention of 14 May 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict and its Protocols, Protection of Cultural Property in the Event of Armed Conflict Report on the Meeting of Experts, Geneva, 5-6 October 2000, էջ 154-161, file:///C:/Users/User/Downloads/cutural-property-report-icrc_002_0805%20(3).pdf (մուտք՝ 21.06.2021):

81 Տե՛ս «Caucasus Heritage Watch»-ի արած արբանյակային լուսանկարները, http://caucasusheritage.cornell.edu/ (մուտք՝ 15.12.2020):

3. Արցախի գրավյալ տարածքներում մշակութային արժեքների պաշտպանության միջազգային իրավական մեխանիզմները

Դեռ անհիշելի ժամանակներից պատերազմների ընդունված առանձնահատկությունն է[82] եղել մշակութային ժառանգության համատարած ոչնչացման և «թալանի իրավունքի»[83] նորմը: Ավանդաբար պատերազմի անխուսափելի հետևանք և պարտվողներին պատժելու միջոց հռչակված «պատերազմի ավարը» մշակութային ժառանգության խորհրդանիշների կողոպուտով իրականացվում էր հաղթողի կողմից[84]: Չնայած այսպիսի ընդունված նորմերին՝ մշակութային ժառանգությունը պաշտպանելու պարտավորությունը տարբեր քաղաքակրթությունների ուշադրության կենտրոնում է եղել մշտապես[85]: Պատերազմների ընթացքում մշակութային ժառանգության ոչնչացման արգելքի օրինակներ կարելի է գտնել Հին Հունաստանում, որտեղ հույն փիլիսոփաները նախազգուշացնում էին վրեժխնդրությունից զերծ պահել մշակութային վայրերը[86]: Իսկ Հին Հռոմում ընդունված էր, որ բախումների ընթացքում և հետո մշակույթին պետք էր դիպչել միայն որպես վերջին միջոցի[87] «Պատերազմի ընթացքում սրբազան վայրերի ոչնչացումը ռազմական անհրաժեշտություն չէր կարող դառնալ»[88],– ընդգծում էր Կիկերոնը: Իսկ իսլամական օրենսդրությունը հավելում էր, որ պատերազմների ժամանակ քաղաքացիական և ռազմական օբյեկտները տարբերակելու պարտավորությունը հստակ հրամայական է և չի ընդունում որևէ բացառություն: Համաձայն առաջին խալիֆ Աբու Բաքրի հրամանների (մ.թ. 632–634 թթ.)՝ «հարձակումները պետք է խստորեն սահմանափակվեն միայն ռազմական թիրախներով»[89]:

Արդեն միջնադարում՝ քրիստոնեական եկեղեցու միջոցով պատերազմների ժամանակ մշակութային ժառանգությունը պաշտպանելու պարտավորությունը առավել կանոնակարգված էր՝ արգելված էին սրբազան

82 Տե՛ս **Rothfield L.**, Antiquities under Siege: Cultural Heritage Protection After the Iraq War. Lanham: Altamira Press, 2008:

83 **Teijgeler R.**, Preserving cultural heritage in times of conflict. In book: Preservation management for libraries, archives and museums, London, 2006, էջ 133-165, https://www.researchgate.net/publication/270216945_Preserving_cultural_heritage_in_times_of_conflict (մուտք՝ 15.12.2020):

84 Տե՛ս **Harvey E. Oyer III**, "The 1954 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict – Is It Working?" A Case Study: The Persian Gulf War Experience, 23 COLUM.-VLA J.L. & ARTS 49, 1999:

85 Տե՛ս **Captain Joshua E. Kastenberg**, USAF "The Legal Regime for Protecting Cultural Property during Armed Conflict", 1997, 42 Air Force Law Review 277, 281:

86 Հին Հունաստանում բազմաթիվ սրբազան վայրեր, օրինակ՝ Դելֆին, Դելոսը և Օլիմպոս լեռը, զինված բախումների դեպքում համարվել են անձեռնմխելի: Ռազմական գործողությունների ընթացքում անթույլատրելի էր թշնամանքի որևէ գործողություն այս վայրերում, ինչպես նաև դրանք չէին կարող դառնալ ապաստարան (տե՛ս **Ducrey P.**, Guerres et guerriers dans la Grèce antique, Payot, Paris, 1969, էջ 243):

87 Տե՛ս **Captain Joshua E. Kastenberg**, նշվ. աշխ., էջ 283:

88 **Tulli M.**, Ciceronis, Actionis in C. Verrem secundae liber quartus (De signis): De officiis ad Marcum filium, cited in Stanislaw Edward Nahlik, "Des crimes contre les biens culturels", Annuaire de l'Association des auditeurs et anciens auditeurs de l'Académie de droit international de La Haye, Vol. 9, 1959, էջ 14:

89 **Teijgeler R.**, նշվ. աշխ., էջ 133-165:

վայրերի վրա հարձակումները[90]: Ի հավելումն վերջինիս՝ այդպիսի տեքստեր կային նաև ասպետների երդումներում և ռազմական առաջնորդների ստորագրած փաստաթղթերում[91]:

Վերածննդի դարաշրջանում կաթոլիկ եկեղեցին շարունակում էր սրբազան վայրերը պատերազմների ժամանակ կողոպուտից և վանդալիզմից հեռու պահելու իր հորդորները[92]: Հենց այս դարաշրջանում պատերազմի ժամանակ պաշտպանվող օբյեկտների շրջանակն էականորեն ընդլայնվեց նաև ոչ սրբազան արժեքներով՝ արվեստի հավաքածուներով, որոնք ճանաչված էին որպես «հատուկ առարկաներ» և իրավական կարգավիճակով տարբերվում էին մյուսներից[93]: Այս առիթով Յակոբ Պրժիլուսկին 16–17-րդ դարերում առաջ քաշեց այն գաղափարը, որ «յուրաքանչյուր ոք պետք է հարգի արվեստի գործը, ոչ միայն վերջինիս կրոնական բնույթի պատճառով...»[94]: Ուստի ազգային պետությունների ստեղծմանը զուգընթաց՝ պահպանվող արժեքների շարքին ավելացան նաև պետության արժեքներն ու պատմությունը խորհրդանշող արժեքները[95]: Եվ սկսած 16–17-րդ դարերից՝ պատերազմական իրավիճակներում մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրը հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Խաղաղության պայմանագրերն այս հարցում ցույց տվեցին միջազգային իրավունքի դանդաղ, բայց անհերքելի առաջընթացը: 1648 թ. Վեստֆալի պայմանագրից սկսած՝ խաղաղության ավելի շատ պայմանագրերում սկսեցին ներառվել հատուկ կետեր, որոնք վերաբերում էին հակամարտությունից հետո մշակութային արժեքների ոչնչացման, թալանի, օտարման, վերադարձի և այլ խնդիրների[96]:

19-րդ դարում Միացյալ Նահանգները դարձավ առաջին պետությունը, որը համակարգեց մշակութային ժառանգության պաշտպանությունը պա-

---

90 Ինչպիսիք են «Աստծո խաղաղությունը» և «Աստծո զինադադարը», որոնք ամրագրում էին ռազմատենչների՝ բազում կանոնների հնազանդվելու պարտավորությունը, որոնցից մի քանիսը պաշտպանում էին նաև մշակութային ժառանգությունը՝ թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական (տե՛ս **Balard M., Genet Jean-Ph. and Rouche M.**, Le Moyen Âge en Occident, Hachette Superieur, Paris, 2003, էջ 104-105):

91 Տե՛ս **Johannot-Gradis Ch.**, նշվ. աշխ., էջ 1253-1275:

92 Տե՛ս **Harvey E. Oyer III,** նշվ. աշխ., էջ 42:

93 Այս գաղափարը զարգացվեց ժամանակի տարբեր իրավաբանների և մտածողների, մասնավորապես՝ Ալբերիկո Գենտիլիի կողմից, որը զինված բախումների ընթացքում պահպանվող մասնավոր սեփականության շարքում նշեց մշակութային արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը (տե՛ս **Alberico Gentili**, De Jure Belli Libri Tres, cited in R. O'Keefe, էջ 6):

94 **Jacob Przyluski**, Leges seu statuta ac privilegia Regni Polonaie (Cracow, 1553), **Toman J.**, The Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, Aldershot/Paris, Dartmouth/UNESCO, 1996, p. 4-5.

95 Ֆրանսիայում Աբբա Գրեգոարի նախաձեռնությամբ 1830 թ. ստեղծվեց հանձնաժողով՝ պատմական հուշարձանների պահպանության վերաբերյալ, որը նպատակ ուներ հակազդելու «վանդալիզմին», որը մոլեգնում էր 1789 թ. ֆրանսիական հեղափոխության ընթացքում և դրանից հետո (տե՛ս Rapport sur les destructions opérées par le vandalisme, et sur les moyens de le réprimer, in Œuvres de l'Abbé Grégoire, Vol. 2: Grégoire, député à la Convention nationale, Nendeln and Paris: KTO Press and EDHIS, 1977, էջ 257):

96 Տե՛ս **Papaioannou K.**, նշվ. աշխ., էջ 257-262,
https://pdfs.semanticscholar.org/803e/f40aad6e9296da3e254767aefd8164ed416a.pdf?_ga=2.41082086.575541654.1606964493-575447221.1602582236 (մուտք՝ 16.12.2020), էջ 6:

տերազմական իրավիճակներում[97] և արգելեց դրան կանխամտածված վնաս հասցնելը[98]: ԱՄՆ-ի մշտական բանակի առաջին գրավոր կանոնակարգը դարձավ Ֆրենսիս Լիբերի (գերմանացի ներգաղթյալ, ԱՄՆ-ում և Կոլումբիայի իրավաբանական դպրոցի պրոֆեսոր) և նախագահ Լինքոլնի կողմից պատրաստված «Հրահանգ ցամաքում ԱՄՆ-ի կառավարության բանակներին»[99] փաստաթուղթը: Այն հրապարակվեց 1863 թ. ապրիլի 24-ին «Ընդհանուր հրաման 100» անվանումով, որն ավելի հայտնի է որպես «Լիբերի օրենսգիրք»[100]: Օրենսգիրքն իր 35-րդ, 36-րդ և 45-րդ հոդվածներով նախատեսում էր մշակութային արժեքների պաշտպանություն[101]: 35-րդ հոդվածը սահմանում էր, որ «Արվեստի դասական գործերը, գրադարանները, գիտական հավաքածուները կամ թանկարժեք գործիքները պետք է ապահովված լինեն բոլոր վնասներից, նույնիսկ եթե դրանք գտնվում են բախումների և ռմբակոծության տարածքներում»[102]: Իսկ 36-րդ հոդվածը վերաբերում էր գրավյալ տարածքներում ժառանգությունը չգողանալու, չոչնչացնելու և չվնասելու պարտավորություններին: Դրանում նշվում էր. «Եթե թշնամական ազգին պատկանող արվեստի գործերը կարող են հանվել գրավյալ տարածքից առանց վնասվածքի, ապա նվաճող պետության կամ ազգի տիրակալը կարող է կարգադրել, որ դրանք բռնագրավվեն կամ հանվեն՝ ի շահ նշված ազգի: Սեփականության հարցը վերջնականապես պետք է կարգավորվի խաղաղության պայմանագրով, որում հաշվի են առնվում ժառանգության իրական «տերերի» մշակութային պատկանելության հարցերը»: Լիբերի օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ «Մշակութային արժեքները ոչ մի դեպքում չի կարելի վաճառել կամ հանձնել, ինչպես նաև մասնավոր կերպով յուրացնել»[103]: Այս կանոնները, սակայն, որոնք հաճախ ամրագրվում էին պատերազմող երկրների միջև կնքված պայմանագրերում, մինչև 19-րդ դարի վերջը սահմանված չէին համընդհանուր պարտադիր կանոնակարգերում[104]:

19-րդ դարի երկրորդ կեսին անցկացվեցին բազմաթիվ միջազգային հանդիպումներ, ինչպիսիք էին 1868 թ. Սանկտ Պետերբուրգի և 1874 թ. Բրյուսելի խորհրդաժողովները, որոնց արդյունքը եղավ պատերազմական

97 Տե՛ս **Hannah G. He.**, Protecting Ancient Heritage in Armed Conflict: New Rules for Targeting Cultural Property During Conflict with ISIS, 30 Md. J. Int'l L., 168, 2015, http://digitalcommons.law.umaryland.edu/mjil/vol30/iss1/12 (մուտք՝ 16.12.2020):

98 Տե՛ս **Miles M.**, Still in the aftermath of Waterloo: a brief history of decisions about restitution. In: Stone P.G., (ed.) Cultural heritage, ethics and the military. Woodbridge: Boydell, 2011, էջ 29-42:

99 Տե՛ս **Techera E.**, Protection of Cultural Heritage in Times of Armed Conflict, MqJIICEnvLaw 1; 2007) 4 (1), էջ 2, http://classic.austlii.edu.au/au/journals/MqJIICEnvLaw/2007/1.html (մուտք՝ 16.12.2020):

100 Չնայած այն պարտադիր էր միայն ԱՄՆ ռազմական ուժերի համար, այնուամենայնիվ, մեծապես համապատասխանում էր գոյություն ունեցող պատերազմական օրենքներին և սովորույթներին:

101 Տե՛ս Instructions for the Government of Armies of the United States in the Field (Lieber Code). 24 April 1863, art. 31, file:///C:/Users/User/Downloads/IHL-L-Code-EN.pdf (մուտք՝ 16.12.2020):

102 **Techera E.**, op. cit., p. 2-3.

103 Protect cultural property in the event of armed conflict, p. 6-7. Տե՛ս նաև The Lieber Code, art. 45, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000138645 (մուտք՝ 21.06.2021):

104 Տե՛ս **Johannot-Gradis Ch.**, նշվ. աշխ., էջ 1253-1275:

իրավիճակներում մշակութային ժառանգության պաշտպանության նորմեր սահմանող կոնվենցիաների նախագծերի կամ հռչակագրերի կազմումը: Դրանցից հարկ է հիշատակել 1874 թ. Բրյուսելի խորհրդաժողովում ներկայացված «Պատերազմի օրենքների և սովորույթների վերաբերյալ միջազգային համաձայնագրի նախագիծը»՝ Բրյուսելի հռչակագիրը[105], որը համարվում է ոլորտի առաջին միջազգային համակարգումը[106]: Դրա 8-րդ հոդվածը նախատեսում էր դատավարության առարկա դարձնել գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության բռնագրավումն ու ոչնչացումը: Իսկ 17-րդ հոդվածն ամրագրում էր, որ «պաշարման կամ ռմբակոծության դեպքում պետք է հնարավորինս խնայել արվեստը, գիտությունը կամ բարեգործական նպատակներին նվիրված կառույցները»[107]:

Պետք է ընդգծել, որ պատերազմի ընթացքում և դրանից հետո մշակութային ժառանգության հետևողական պաշտպանության իրավական համակարգը ձևավորվեց Հաագայի երկու միջազգային խորհրդաժողովների ընթացքում, որոնցում մշակվեցին առաջին պաշտոնական համաձայնագրերը՝ Հաագայի 1899[108] և 1907 թվականների[109] «Ցամաքում պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաները: 1899 թ. կոնվենցիան և դրա կանոնակարգերը թեև հիմնականում վերաբերում էին ռազմագերիներին և խաղաղ բնակիչներին, այնուամենայնիվ, կային որոշ հոդվածներ գրավյալ տարածքներում մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ:

Այսպես՝ 26-րդ հոդվածում նշվում էր, որ «Հակառակորդի մշակութային ժառանգության ոչնչացումը կամ բռնագրավումը պաշտոնապես արգելված է, եթե դա հրամայաբար չի պահանջվում պատերազմի ռազմական անհրաժեշտությամբ»[110]:

Հաագայի 1907 թ. կոնվենցիան գրեթե ամբողջությամբ կրկնում է նախորդը[111], բայց իր 27-րդ հոդվածով ավելի է ամրապնդում մշակութային ժառանգության պահպանության իրավական հիմքերը՝ շեշտելով, որ «պաշարումների և ռմբակոծությունների ժամանակ[112] պետք է ձեռնարկվեն բոլոր

105 Չնայած Մեծ Բրիտանիայի արձագանքին՝ հռչակագիրը երբեք պաշտոնապես չի ընդունվել (տե՛ս **Techera E.**, նշվ. աշխ., էջ 2-4):

106 Տե՛ս **Papaioannou K.**, նշվ. աշխ., էջ 257-262:

107 Project of an International Declaration concerning the Laws and Customs of War. Brussels, 27 August 1874, art. 8, 17, file:///C:/Users/User/Downloads/IHL-7-EN.pdf (մուտք՝ 16.12.2020).

108 Տե՛ս Convention with Respect to the Laws and Customs of War on Land and Its Annex: Regulations Concerning the Laws and Customs of War on Land arts. 28, 47, 56, July 29, 1899, 32 Stat. 1803, T.S. No. 403:

109 Տե՛ս Convention Respecting the Laws and Customs of War on Land and Its Annex: Regulations Concerning the Laws and Customs of War on Land art. 27, Oct. 18, 1907, 36 Stat. 2277, T.S. N 538:

110 Convention signed on 29 July 1899 and entered into force 4 September 1900, 26 Martens Nouveau Recueil (ser 2) 949. Regulation with respect to the Laws and Customs of War on Land 29 July 1899.

111 Տե՛ս Convention on the Laws and Customs of War on Land Signed on 18 October, 1907:

112 Չնայած 27-րդ հոդվածը սահմանափակված է պաշարումներով և ռմբակոծություններով, այժմ ընդունված է, որ այս կանոնը տարածվում է բոլոր ռազմական գործողությունների վրա, և հարգանքի պարտավորությունը դադարում է միայն այն դեպքում, երբ տվյալ կառույցները վերափոխվել են ռազմական նպատակներով (տե՛ս **Henckaerts M. and Doswald Beck L.**, Supra note 48, էջ 127, Rule 38 (A)):

անհրաժեշտ քայլերը՝ հնարավորինս խնայելու կրոնին, արվեստին, գիտությանը և բարեգործությանը նվիրված կառույցները, եթե դրանք չեն օգտագործվում ռազմական նպատակներով»[113]: Իսկ գրավված տարածքներին վերաբերող 56-րդ հոդվածն արգելում է քաղաքացիական ժառանգությանը, կրոնին, բարեգործությանը, կրթությանը, արվեստին և գիտությանը նվիրված հաստատությունների, պատմական հուշարձանների, արվեստի և գիտության գործերի առգրավումները, ոչնչացումը կամ դիտավորյալ վնասումը՝ դրանք համարելով դատական գործընթացների առարկա:

Այսպիսով՝ Հաագայի 1907 թ. կոնվենցիան և դրան կցված կանոնակարգերը միջազգային իրավունք ներմուծեցին սովորույթ, որ մշակութային ժառանգության արժեքները պատերազմական իրավիճակներում պետք է պահպանվեն:

1935 թ. ապրիլի 15-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ն կնքեց «Գեղարվեստական և գիտական հաստատությունների և պատմական հուշարձանների պաշտպանության մասին պայմանագիր»՝ Ռերիխի դաշնագիր/պակտը[114], որի 1-ին հոդվածով սահմանվում է, որ «Պատերազմի ժամանակ պատմական հուշարձանները, թանգարանները, գիտական, գեղարվեստական, կրթական և մշակութային ինստիտուտները, ինչպես նաև վերջինիս անձնակազմը պետք է հարգվեն»[115]:

Լոնդոնի 1943 թ. հռչակարում ևս դրույթներ կան գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության վերաբերյալ: Հռչակագիրը անօրինական է համարում սեփականության իրավունքի ցանկացած փոխանցում, այդ թվում՝ մշակութային արժեքներինը[116]:

1946 թ. Նյուրնբերգի միջազգային տրիբունալը էլ ավելի ամրապնդեց Հաագայի կոնվենցիայի և կանոնակարգերի կարևորությունը՝ դրանք համարելով պատերազմի **սովորութային օրենքներ** և կիրառելի պրակտիկա ողջ միջազգային հանրության համար:

Չնայած մշակութային ժառանգության ոչնչացման դեմ գոյություն ունեցող արգելքներին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում աշխարհը կրկին տեսավ մշակութային արժեքների համատարած ոչնչացման և թալանի բազմաթիվ դեպքեր[117], որոնք բացահայտեցին նախորդ կոնվենցիաների թերությունները[118] և միջազգային հանրությանը մղեցին ժառանգության պաշտպանության ավելի արդյունավետ համակարգի

113 **Techera E.**, op. cit., p. 1. Տե՛ս նաև Hague IV, art. 27:

114 Տե՛ս Treaty on the Protection of Artistic and Scientific Institutions and Historic Monuments (Roerich Pact). Washington, 15 april 1935, file:///C:/Users/User/Downloads/IHL-44-EN.pdf (մուտք՝ 16.12.2020):

115 Protect cultural property in the event of armed conflict, The 1954 Hague Convention And Its Two Protocols, UNESCO, 2005, pp. 1-25, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000138645 (մուտք՝ 16.12.2020).

116 Տե՛ս London Declaration, file:///C:/Users/User/Downloads/nla.obj-648522001.pdf (մուտք՝ 16.12.2020):

117 Տե՛ս **Captain Joshua E. Kastenberg**, նշվ. աշխ., 42 Air Force Law Review 277, էջ 283:

118 Տե՛ս **Pasikowska-Schnass M.**, Protection of cultural heritage in armed conflicts, Briefing March 2016, Members' Research Service PE 579.081, European parlament, էջ 1-10:

ստեղծման որոնումներին[119]: Ուստի Նիդեռլանդների նախաձեռնությամբ ընդունվեցին 1954 թ. մայիսի 14-ի «Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիան»[120], դրա կատարման կանոնակարգերը, գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանությանը վերաբերող արձանագրությունը և երեք բանաձևերը[121]: Սա, փաստորեն, հետպատերազմյան առաջին համակարգված կանոնակարգն էր, համընդհանուր իրավասությամբ առաջին միջազգային բազմակողմ պայմանագիրը, որը ձևավորում էր մշակութային արժեքների պաշտպանության համապարփակ իրավական դաշտ[122]: Պետք է ընդգծել, որ կոնվենցիան նախատեսում էր մշակութային ժառանգության պաշտպանություն թե՛ միջազգային և թե՛ ոչ միջազգային բախումների ժամանակ՝ ներառյալ օկուպացիան: Այն փորձում էր ապահովել, որ մշակութային արժեքները հարգվեն որպես մարդկության ընդհանուր ժառանգություն[123], որը մեծ քայլ էր խնդրի իրավական զարգացման գործում, քանզի դեռ ոչ մի կանոնակարգ մշակույթի կորուստը չէր կապել ողջ մարդկության աղքատացման հետ: Կոնվենցիայի առաջին հոդվածում սահմանվում է մշակութային արժեքը. «Անկախ ծագումից՝ յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգության համար մեծ նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ արժեքներ, ինչպիսիք են ճարտարապետության, արվեստի կամ պատմության հուշարձանները, անկախ դրանց կրոնական կամ աշխարհիկ բնույթից....»[124]: Կոնվենցիայի տրամաբանությունից ելնելով՝ ազգերն են որոշելու, թե ինչն է իրենց ազգի՝ «մեծ կարևորության» ժառանգությունը: Կոնվենցիայի 4-րդ հոդվածն արգելում է վանդալիզմի, գողության, կողոպուտի կամ յուրացման ցանկացած գործողություն և բացարձակ արգելք դնում մշակութային արժեքների դեմ ուղղված հաշվեհարդարի գործողությունների վրա. «Պետությունները պարտավոր են հարգել ինչպես իրենց սեփական, այնպես էլ մյուս կողմի տարածքում գտնվող մշակութային արժեքները՝ զերծ մնալով թշնամանքի և հաշվեհարդարի գործողություններից»[125]: Սակայն այս դեպքում ևս բացառություն է այն դեպքը, երբ «ռազմական անհրաժեշտությունը» հրամայականորեն պահանջում է այդպիսի որոշում[126]:

---

119 Տե՛ս **Papaioannou K.**, նշվ. աշխ., էջ 257-262:

120 Տե՛ս Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, May 14, 1954:

121 Տե՛ս Protect cultural property in the event of armed conflict, The 1954 Hague Convention And Its Two Protocols, էջ 1-25, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000138645 (մուտք՝ 16.12.2020):

122 Տե՛ս Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, signed at The Hague, 14 May 1954, reprinted in Dietrich Schindler and Jiri Toman (Eds.), The laws of armed conflicts: A collection of conventions, resolutions and other documents, 3rd ed., Martinus Nijhoff/Henry Dunant Institute, Dordrecht/ Geneva, 1988, էջ 745-759:

123 Տե՛ս **Teijgeler Rene**, նշվ. աշխ., էջ 133-165:

124 Protect cultural property in the event of armed conflict, The 1954 Hague Convention And Its Two Protocols, United Nations Educational, Scientific and Cultural Organization, 2005, p. 11.

125 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict 1954, article 4, UNESCO, http://www.unesco.org/new/en/culture/themes/armed-conflict-and-heritage/convention-and-protocols/1954-hague-convention/ (մուտք՝ 15.12.2020).

126 Տե՛ս նույն տեղում, հոդված 4, մաս 2:

Պետք է նաև ընդգծել, որ 1954 թ. Հաագայի կոնվենցիայում շարադրված սկզբունքները նույնպես ընդունվել են որպես միջազգային սովորութային իրավունք[127], ինչը նշվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր խորհրդաժողովում, և վերաբերում են նաև կոնվենցիային չանդամակցող պետություններին[128]:

Հարկ է, սակայն, ընդգծել, որ 1954 թ. կոնվենցիան հիմնականում անդրադառնում էր բախումների ընթացքում մշակութային ժառանգության պաշտպանությանը, և հետկոնֆլիկտային իրավիճակներում բազմաթիվ խնդիրներ մնում էին չկանոնակարգված: Ուստի Հաագայի խորհուրդը նույն՝ 1954 թվականին ընդունեց լրացուցիչ փաստաթուղթ՝ առաջին արձանագրությունը[129], որում ներկայացվում էին գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության մեխանիզմներն ու ժառանգության ապօրինի դուրսբերման և վերադարձի պայմանները: Օկուպացված տարածքից մշակութային արժեքների դուրսբերումը կանխելու պարտավորությունը սահմանված է Հաագայի առաջին արձանագրության 1-ին կետում. «Յուրաքանչյուր բարձր պայմանավորվող կողմ պարտավորվում է կանխել զինված հակամարտության ընթացքում իր կողմից գրավված տարածքից մշակութային արժեքների փոխադրումը երրորդ երկիր»[130]: Արձանագրության 3-րդ կետը սահմանում է, որ մշակութային արժեքները երբեք չպետք է պահվեն որպես պատերազմի հատուցում, և գրավող պետությունը պարտավորվում է ռազմական գործողությունների դադարեցումից հետո իր կողմից գրավված տարածքի իրավասու իշխանություններին վերադարձնել մշակութային արժեքները[131]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բազմաթիվ էթնիկ բախումները և գրավյալ տարածքներում մշակութային արժեքների պաշտպանության խնդիրները 1954 թ. կոնվենցիայի և առաջին արձանագրության արդյունավետությունը ընդհանուր մտահոգության առարկա դարձրին, և 1991 թ. Նիդեռլանդների կառավարության նախաձեռնությամբ «1954 թ. կոնվենցիայի վերանայում»-ը ներառվեց ՄԱԿ-ի միջազգային իրավունքի տասնամյակի

127 Միջազգային սովորութային իրավունքը հաստատվում է քաղաքակիրթ ժողովուրդների շրջանում, և դա իրավաբանորեն պարտադիր է (տե՛ս **Wayne Sandholtz**, The Iraqi National Museum and International Law: A Duty to Protect, 44 Colum. J. Transnat'l L., 185, 228, 2005 (summarizing recent scholarship accepting the basic tenets of cultural property protection as customary international law)): Հիմնվելով պատմական ընկալման վրա, որ մշակութային արժեքների վայրերը պատերազմի ընթացքում պետք է պաշտպանված լինեն, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր խորհրդաժողովի 27-րդ նստաշրջանը (Փարիզ, 1993 թ., նոյեմբեր-հոկտեմբեր) Հաագայի 1954 թ. կոնվենցիայի վերաբերյալ ընդունեց 3.5 բանաձևը, որը հաստատեց, որ զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության և պահպանման հիմնարար սկզբունքները կարող են համարվել միջազգային սովորութային իրավունքի մաս (տե՛ս Protect cultural property in the event of armed conflict, The 1954 Hague Convention And Its Two Protocols, էջ 1-25):

128 Տե՛ս UNESCO General Conference Res. 3.5, United States, Annotated Supplement to the Naval Handbook:

129 Այժմ 110 պետություն մասնակից է առաջին արձանագրությանը, այդ թվում՝ Հայաստանը, Ադրբեջանը և Թուրքիան:

130 First Protocol to the Hague Convention for the Protection of Cultural Property 1954, UNESCO, http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=15391&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html (մուտք՝ 15.12.2020).

131 Տե՛ս նույն տեղում, հոդված 3:

ծրագրում (UN's Decade of International Law)[132], որից հետո ստեղծված միջկառավարական խորհրդաժողովների արդյունքների հիման վրա 1993 թ. լույս տեսավ պրոֆեսոր Պատրիկ Բոյլանի զեկույցը[133]: Հաջորդող տարիներին փորձագիտական հանդիպումների հետևանքով ստեղծվեց Լաուզվոլտի փաստաթուղթը՝ The Lauswolt document[134] (Պ. Բոյլանի զեկույցի վերանայված պայմանագրի նախագիծը), և կազմվեց երկրորդ արձանագրությունը[135], իսկ 1999 թ. մարտի 26-ին այն ընդունվեց առանց քվեարկության[136]: Արձանագրությունը հատուկ դրույթներ ունի գրավյալ տարածքներում մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ:

1997 թ. Լաուզվոլտի վերանայված փաստաթղթի 1-ին հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ առանց սահմանափակելու մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ. արձանագրության դրույթները՝ արգելվում է արտահանել կամ այլ կերպ ապօրինաբար հեռացնել մշակութային արժեքները գրավյալ տարածքից: Իսկ 12-րդ հոդվածը հավելում է, որ մշակութային ժառանգության հանդեպ հարգանքի նորմը կիրառելի է նաև ոչ միջազգային բախումների դեպքում:

Հաագայի 1999 թ. երկրորդ արձանագրության 9-րդ հոդվածի 1-ին կետը ևս դրույթներ է առաջարկում օկուպացված տարածքներում մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ: Մասնավորապես. «Առանց խախտելու կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածների դրույթները՝ մի կողմի տարածքն ամբողջովին կամ մասնակիորեն բռնազավթած կողմը բռնազավթված տարածքի առնչությամբ արգելում կամ կանխում է մշակութային արժեքի անօրինական արտահանումը, տեղափոխումը կամ սեփականության իրավունքի փոխանցումը, բոլոր հնագիտական պեղումները, եթե դրանք խստորեն չեն պահանջվում մշակութային արժեքի պաշտպանության, հաշվառման կամ պահպանման համար, մշակութային արժեքի ցանկացած փոփոխություն, դրա օգտագործման ձևի փոփոխությունը, որոնք նպատակ ունեն թաքցնելու կամ ոչնչացնելու մշակութային, պատմական կամ գիտական վկայությունները»[137]:

---

132 Տե՛ս **Henckaerts J-M.**, New rules for the protection of cultural property in armed conflict: The significance of the Second Protocol to the 1954 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, International Review of the Red Cross, 835, 1999, էջ 52, www.icrc.org/eng/resources/documents/article/other/57jq37.htm (մուտք՝ 15.12.2020):

133 Տե՛ս **Patrick J. Boylan**, Review of the Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict (The Hague Convention of 1954), UNESCO, Paris, 1993, էջ 19:

134 Տե՛ս **Henckaerts J-M.**, նշվ. աշխ., էջ 594:

135 Տե՛ս Draft Second Protocol to the 1954 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, UNESCO Doc. HC/1999/1/rev.1, February 1999:

136 Տե՛ս Second Protocol to the Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, signed at The Hague, 17 May 1999, UNESCO Doc. HC/1999/7, 26 March 1999:

137 Second Protocol to the Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict 1999, UNESCO, http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=15207&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html (մուտք՝ 12.12.2020).

Նույն փաստաթղթի 21-րդ հոդվածի երկրորդ մասը պետություններից պահանջում է կանխել այդ խախտումները[138]:

4. Միջազգային այլ կոնվենցիաներ ու փաստաթղթեր, որոնք պաշտպանում են մշակութային ժառանգությունը օկուպացված տարածքներում

Մշակութային ժառանգության պաշտպանության համար լրացուցիչ գործողություններ կարող են ձեռնարկվել Միջազգային քրեական դատարանի՝ Հռոմի կանոնադրության համաձայն[139], ըստ որի՝ մշակութային ժառանգության ոչնչացումը միջազգային ռազմական հանցագործություն է[140]: Այդ կանոնադրության 8-րդ հոդվածով «Արգելվում է դիտավորյալ ուղղորդել հարձակումները կրոնին, կրթությանը, արվեստին, գիտությանը կամ բարեգործական նպատակներին նվիրված կառույցների, պատմական հուշարձանների, հիվանդանոցների, հիվանդների ու վիրավորների կենտրոնացման վայրերի վրա, եթե դրանք ռազմական թիրախներ չեն»[141]:

Պատերազմից հետո մշակութային ժառանգության պաշտպանության սկզբունքներ է առաջարկում նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2003 թ. ընդունված «Մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացման վերաբերյալ հռչակագիրը»[142], որում նշվում է, որ «Միջազգային հանրությունն ընդունում է մշակութային ժառանգության պաշտպանության կարևորությունը և վերահաստատում իր պատրաստակամությունը՝ ցանկացած ձևով պայքարելու դրա կանխամտածված ոչնչացման դեմ, որպեսզի մշակութային ժառանգությունը փոխանցվի հաջորդ սերունդներին»[143]: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիան ևս նախատեսում է պաշտպանական լծակներ,

138 «Առանց խախտելու կոնվենցիայի 28-րդ հոդվածը՝ յուրաքանչյուր կողմ ընդունում է օրենսդրական, վարչական կամ կարգապահական այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել հետևյալ գործողությունները ճնշելու համար, եթե դրանք կատարվել են կանխամտածված. ա) կոնվենցիայի կամ սույն արձանագրության խախտմամբ մշակութային արժեքի օգտագործում, բ) կոնվենցիայի կամ սույն արձանագրության խախտմամբ մշակութային արժեքի՝ գրավված տարածքից անօրինական արտահանում, այլ տեղաշարժեր կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում» (Second Protocol to the Hague Convention for the Protection of Cultural Property, Article 9 (1) and Article 21):

139 Տե՛ս Rome Statute of the International Criminal Court, ICC, The Netherlands, 2011, էջ 4, https://www.icc-cpi.int/resource-library/documents/rs-eng.pdf (մուտք՝ 12.12.2020):

140 Հռոմի կանոնադրությունը 21-րդ դարի ինստիտուտ է, հիմնվել է 1998 թվականին և քննում է այն անձանց գործերը, որոնք մեղադրվում են միջազգային ամենակարևոր հանցագործություններում, ինչպիսիք են ցեղասպանությունը, մարդկության դեմ ծանր հանցագործությունները և ռազմական հանցագործությունները (տե՛ս UN Diplomatic Conference of Plenipotentiaries on the Establishment of an ICC, Rome Statute of the International Criminal Court (A/CONF.183/9), 1998):

141 Article 8(2)(b)(ix) Rome Statute of the International Criminal Court relating to international armed conflicts and, Article 8(2)(e)(iv) relating to non-international conflicts.

142 Տե՛ս UNESCO Declaration Concerning the Intentional Destruction of Cultural Heritage, 2003, art. III:

143 Culture Under Fire: Armed Non-State Actors And Cultural Heritage In Wartime, Geneva Call, October 2018, pp. 1-62.

Վեր համահայկական խնդրես, ԺԹ (ԺԹ) տարի, թիվ 3(75), հուլիս-սեպտեմբեր, 2021

երբ պատերազմի ժամանակ կամ դրանից հետո վտանգված է ժառանգությունը[144]:

Օկուպացված տարածքներից մշակութային արժեքների արտահանումը կանխելու դրույթներ է ներառում ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թ. «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի անօրինական փոխանցումն արգելող» կոնվենցիան: Հետկոնֆլիկտային իրավիճակներում մշակութային հավաքածուների զանգվածային թալանը և ապօրինի առևտուրը կարող են մասամբ դադարեցվել նաև 1995 թ. «Գողացված և ապօրինի արտահանված մշակութային օբյեկտների մասին» ՈՒՆԻԴՐՈՒԹ-ի կոնվենցիայով[145]:

Մշակութային ժառանգությունը պատերազմի ընթացքում և դրանից հետո պաշտպանելու համար ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ևս ձեռնարկել է մի շարք քայլեր[146], որոնք ապահովում են մշակութային ժառանգության պաշտպանության լրացուցիչ մեխանիզմներ, և ընդունել մի շարք բանաձևեր, որոնք կարելի է խմբավորել 3 փաթեթներում:. Առաջին փաթեթը (2199, 2322, 2347, 661) վերաբերում է զինված բախումների հետևանքով տուժած տարածքների մշակութային արժեքների ապօրինի առևտուրը դադարեցնելուն[147], երկրորդ փաթեթը (2056, 2100)՝ մշակութային ժառանգու-

144 Տե՛ս The Military Manual on the Protection of Cultural Property, էջ 7, պարագրաֆ 24:

145 Տե՛ս Creating a favourable legal environment for Contract Farming –The UNIDROIT/FAO/IFAD Legal Guide on Contract Farming UNIDROIT – Villa Aldobrandini - Via Panisperna 28 – Rome, Wednesday, 27 April 2016, www.unidroit.org/english/ Convention /1995culturalproperty/1995culturalproperty-e.htm (մուտք՝ 21.05.2021):

146 ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի 1999 թ. օգոստոսի 6-ի տեղեկագիրը միջազգային մարդասիրական իրավունքի պահպանման առնչությամբ «արգելում է հարձակվել մշակութային ժառանգության վրա, կատարել գողության, կողոպուտի, յուրացման և վանդալիզմի ցանկացած գործողություն» (Secretary-General's Bulletin Observance by United Nations forces of international humanitarian law, United Nations ST/SGB/1999/13 Secretariat, 6 August 1999): 2014 թվականին ՄԱԿ-ը մշակել է «Հանցագործությունների կանխարգելման և քրեական արդարադատության պատասխաններ» ուղեցույցը՝ մշակութային արժեքների վաճառքի վերաբերյալ: Ավելին՝ ուղեցույցները խրախուսում են անդամ պետություններին քրեականացնել մշակութային արժեքների առևտուրը կամ թալանը և ավելի լավ պատրաստել մաքսային մարմիններին, դատախազներին, ինչպես նաև ոստիկանության ուժերին՝ մշակութային ապրանքների ապօրինի վաճառքի դեմ պայքարելու համար (տե՛ս **Renold**, The legal and illegal trade in cultural property to and throughout Europe: facts, findings and legal analysis, 2018, էջ 14, **Strategy for Reinforcing UNESCO's** Action for the Protection of Culture and the Promotion of Cultural Pluralism in the Event of Armed Conflict, https://en.unesco.org/system/files/unesco_clt_strategy_en.pdf (մուտք՝ 15.12.2020)):

147 2015 թ. փետրվարի 12-ի 2199-րդ բանաձևի համաձայն՝ անդամ պետությունները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն կանխելու իրաքյան և սիրիական մշակութային գույքի և հնագիտական, պատմական, մշակութային, հազվագյուտ այլ իրերի առևտուրը: Խորհուրդը հաստատեց «Ահաբեկչական գործողությունների պատճառով միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքներ» թեմայով մշակութային արժեքների ապօրինի շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման միջև կապը: Բանաձևի 16-րդ հոդվածը հաստատեց, որ «Ալ Քաիդա» և «Դաեշ» ահաբեկչական կազմակերպությունները եկամուտ են ստանում Իրաքից և Սիրիայից մշակութային արժեքների՝ մաքսանենգ ճանապարհով թալանից և միջոցներն ուղղում հարձակումների կազմակերպմանը (տե՛ս **Analeigh Willett** and **Salima B. Mahamoudou**, UNESCO Background Guide 2019, National Model United Nations, New York City, NY, USA, 24-28 March (Conf. A) / 14-18 April (Conf. B), էջ 2-50, https://www.nmun.org/assets/documents/conference-archives/new-york/2019/ny19-bgg-unesco.pdf (մուտք՝ 15.12.2021)): 2003 թ. մայիսի 22-ի 1483-րդ բանաձևը վերաբերում է Քուվեյթ ներխուժելուց ի վեր Իրաքից ապօրինաբար հեռացված մշակութային արժեքների առևտրի արգելքին և դրանց վերադարձը դյուրացնելուն (տե՛ս **Magdalena Pasikowska-Schnass**, Protection of cultural heritage in armed conflicts, Briefing March 2016, Members' Research Service PE 579.081, European parlament, էջ 1-10): 2016 թ. ընդունվեց 2322-րդ բանաձևը, որն անդամ պետություններին կոչ է անում իրականացնելու ազգային միջոցառումներ և մշակութային ժառանգության առևտրի բոլոր ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարում զարգացնելու «իրավապահ և դատական լայն համագործակցություն, քանզի ժառանգության արժեքների վաճառքը կարող է ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր լինել ահաբեկչական խմբավորումների համար»: Իսկ 2347-րդ բանաձևը դատապարտում է «ահաբեկչական խմբավորումների» կողմից մշակութային ժառանգության անօրինական ոչնչացումը և կոչ է անում անդամ պետություններին ձեռնարկելու մի շարք միջոցառումներ, ներառյալ ներպետական օրենսդրական միջոցառումները, կանխելու

թյան պաշտպանությանը պատերազմից հետո[148], իսկ երրորդ փաթեթը՝ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերին և բուն մշակութային ժառանգության պաշտպանությանը[149]: Հիշատակման է արժանի 2003 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բանաձևը, ըստ որի՝ ՄԱԿ-ը իր մտահոգությունն է հայտնում զինված բախումների տարածքներում (ներառյալ գրավյալ տարածքները՝ անկախ նրանից, թե ինչպիսի բախումներ են՝ միջազգայի՞ն, թե՞ ներքին) մշակութային արժեքների ոչնչացման, դուրսբերման, գողության, կողոպուտի, ապօրինի տեղափոխության կամ յուրացման և վանդալիզմի կամ վնաս հասցնելու ցանկացած գործողության վերաբերյալ:

Զինված հակամարտությունների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության գործում ներգրավված են նաև միջազգային, տարածաշրջանային և տեղական մի շարք ՀԿ-ներ[150]: Օրինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամ հակամարտության կողմերի խնդրանքով Կարմիր խաչը կարող է ձեռնարկել հումանիտար գործողություններ՝ ինչպես զոհերին, գերիներին, այնպես էլ գրավյալ տարածքներում մշակութային նշանակության օբյեկտները, կառույցները և վայրերը պաշտպանելու նպատակով[151]:

մշակութային արժեքների անօրինական առևտուրը (տե՛ս Culture Under Fire: Armed Non-State Actors And Cultural Heritage In Wartime, Geneva Call, October 2018, էջ 1-62): Իսկ 1990 թ. օգոստոսի 6-ի 661-րդ բանաձևը վերաբերում է Իրաքի մշակութային ժառանգության ապօրինի առևտրի կամ տեղափոխման արգելքին: Որոշումն ուղղված էր անդամ պետությունների կողմից Իրաքից ապօրինաբար հանված մշակութային արժեքների ներմուծման սահմանափակումներին և վաճառքի արգելքի պարտադրմանը, ինչպես նաև նման արժեքների անվտանգ վերադարձին Իրաքի մշակութային ժառանգության հաստատություններ (տե՛ս **Roger O'Keefe**, **Camille Péron, Tofig Musayev, Gianluca Ferrari**, նշվ. աշխ., էջ 1-91):

148 2012 թ. հուլիսի 5-ին՝ Մալիի պատերազմից հետո, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց 2056-րդ բանաձևը, որը կոչ էր անում «բոլոր կողմերին անհապաղ ձեռնարկելու համապատասխան քայլեր՝ ապահովելու Մալիի համաշխարհային ժառանգության արժեքների պաշտպանությունը» (UN Security Council, Security Council resolution 2056 (2012) [on the situation in Mali], 5 July 2012, S/RES/2056 (2012), https://www.refworld.org/docid/505089412.html (մուտք՝ 10.08.2021)): Իսկ 2013 թ. ապրիլի 25-ի 2100-րդ բանաձևով Մալիում ստեղծվեց ՄԱԿ-ի բազմաչափ ինտեգրված կայունացման առաքելություն (MINUSMA), որպեսզի պաշտպանի Մալիի մշակութային և պատմական վայրերը (տե՛ս UN Security Council, Security Council resolution 2100 (2013) [on establishment of the UN Multidimensional Integrated Stabilization Mission in Mali (MINUSMA)], 25 April 2013, S/RES/2100 (2013), https://www.refworld.org/docid/519dffbe4.html (մուտք՝ 10.08.2021)):

149 2014 թվականին Անվտանգության խորհուրդը Մալիում ՄԱԿ-ի բազմաչափ ինտեգրված կայունացման առաքելության մանդատի մեջ ներառեց մշակութային ժառանգության պաշտպանությունը: 2017 թվականի մարտին Անվտանգության խորհուրդն ընդունեց իր առաջին բանաձևը, որը նվիրված էր մշակութային ժառանգությանը: Բանաձևը հաստատում է մշակութային ժառանգության պաշտպանությունը որպես միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման հիմնական միջոց: Անվտանգության խորհուրդը հաստատեց նաև մշակութային ժառանգության պաշտպանությունը ոչ միայն որպես ահաբեկչության դեմ պայքարի, այլ նաև «ապագա սերունդների համար անգնահատելի ժառանգությունը» պաշտպանելու միջոց (տե՛ս UN Security Council, Security Council, Resolution 2347 (2017), Adopted by the Security Council at its 7907th meeting, on 24 March 2017, https://www.undocs.org/S/RES/2347%20(2017) (մուտք՝ 10.08.2021)):

150 Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի համար պատասխանատու մարմիններ են «Կապույտ վահանի» միջազգային կոմիտեն, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը (ICOMOS), Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային ֆեդերացիան, ինչպես նաև Կարմիր խաչի միջազգային կոմիտեն, Համաշխարհային մաքսային կազմակերպությունը (WCO), Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությունը (ԻՆՏԵՐՊՈԼԸ), Միջազգային քրեական դատարանը, Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման ուսումնասիրության միջազգային կենտրոնը (ICCROM), Թանգարանների միջազգային խորհուրդը (ICOM) և այլն:

151 ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԿԽՄԿ-ի միջև 2016 թվականին համաձայնեցված փոխըմբռնման հուշագրի 1-ին կետի 6-րդ մասը ճանաչում է ԿԽՄԿ-ի առանձնահատուկ դերը ռազմական գործողություններից բխող վտանգներից մշակութային արժեքները պաշտպանելու համար օգնության տրամադրման գործում (տե՛ս **Roger O'Keefe, Camille Péron, Tofig Musayev, Gianluca Ferrari**, նշվ. աշխ., պարագրաֆ 234-235):

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թ. ընդունված ռազմական ձեռնարկի՝ օկուպացված տարածքում մշակութային ժառանգության ոչնչացումը, որն արդարացված չէ ռազմական անհրաժեշտությամբ, ռազմական հանցագործություն է[152]: Նման հանցագործության համար մեղավորները կարող են դատապարտվել ինչպես միջազգային, այնպես էլ ազգային քրեական դատարանների և տրիբունալների կողմից: Նույն ձեռնարկում նշվում է նաև, որ օկուպացիայի ընթացքում մշակութային արժեքների կամ դրանց անմիջական շրջակայքի օգտագործումը, որը կարող է հանգեցնել դրանց վիճակի վատթարացման, վանդալիզմի կամ ավազակային հարձակման վտանգի, արգելվում է, բացառությամբ այն դեպքի, երբ դրանց օգտագործումը ռազմական անհրաժեշտություն է[153]: Ռազմական օկուպացիայի ընթացքում, ինչպես ռազմական գործողությունների ընթացքում, բացարձակապես արգելված են ռազմական ուժերի կողմից գողության, կողոպուտի կամ յուրացման և մշակութային ունեցվածքի վանդալիզմի բոլոր ձևերը: Այս տեսակի բոլոր դիտավորյալ գործողությունները ռազմական հանցագործություններ են:

2015 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի մասնակից պետությունների ընդունած «Բոննի համաշխարհային ժառանգության մասին հռչակագիրը» ևս անդրադառնում է զինված հակամարտության գոտում ֆիզիկական վնասներին և մշակութային ժառանգության ապօրինի շրջանառությանը[154]: Այն դատապարտում է վանդալիզմը և մշակութային ժառանգության թալանը՝ որպես պատերազմի մասնակիցների և ահաբեկչական խմբավորումների եկամտի աղբյուր[155]:

5. Գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանությունը միջազգային հումանիտար իրավունքի շրջանակներում

Օկուպացված տարածքներում մշակութային ժառանգության արժեքները պաշտպանվում են նաև միջազգային մարդասիրական իրավունքով: Միջազգային մարդասիրական իրավունքը ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային հակամարտություններում կիրառվող այն իրավական սկզբունքների և նորմերի համակարգն է, որը սահմանում է միջազգային իրա-

152 Տե՛ս Protection of Cultural Property, Military Manual:
153 Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 185, էջ 49-64:
154 Տե՛ս **Bonn Declaration on World Heritage**, On the occasion of its 39th session in Bonn/Germany, 2015, https://www.iucn.org/sites/dev/files/import/downloads/bonn_declaration_on_world_heritage.pdf (մուտք՝ 15.12.2020):
155 Տե՛ս **Analeigh Willett and Salima B. Mahamoudou**, UNESCO, Background Guide 2019, National Model United Nations, New York City, NY, USA 24-28 March (Conf. A) / 14-18 April (Conf. B), էջ 2-50, https://www.nmun.org/assets/documents/conference-archives/new-york/2019/ny19-bgg-unesco.pdf (մուտք՝ 15.12.2020):

վունքի սուբյեկտների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները զինված հակամարտության ընթացքում և դրանից հետո մարդասիրական նորմերի պահպանության և պատասխանատվության մեխանիզմներ տալիս խախտման դեպքերի համար[156]: Միջազգային մարդասիրական իրավունքը, որը հաճախ անվանվում է նաև պատերազմի իրավունք, միջազգային իրավական նորմերի համախումբ է, որով կարգավորվում են պատերազմի ժամանակ գործող վարքականոնները կամ պատերազմի իրավունքը (jus in bello): Սա միջազգային իրավունքի այն ճյուղն է, որը ձգտում է սահմանափակելու զինված ընդհարման ազդեցությունը՝ պաշտպանելով անձանց, որոնք չեն մասնակցում ռազմական գործողություններին, բայց տուժում են իրենց իրավունքների ոտնահարման տեսանկյունից: Միջազգային մարդասիրական իրավունքը ներառում է իրավունքի երկու ճյուղ՝ Հաագայի և Ժնևի իրավունքները, որոնց հիմքում արդեն քննարկված կոնվենցիաներն ու համապատասխան արձանագրություններն են, ինչպես նաև սովորութային դարձած նորմերը: Միջազգային մարդասիրական իրավունքի գործառույթների մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ, ի տարբերություն միջազգային իրավունքի մյուս ճյուղերի, որոնց հիմքը հնարավոր հակամարտություններն առանց ուժային միջոցների գործադրման լուծելու ձգտումն է, միջազգային մարդասիրական իրավունքն ուղղված է պետությունների միջև բռնության գործադրումը փոխհամաձայնեցված որոշակի նորմերի ենթարկելուն[157], որից անմասն չէ մշակույթի իրավունքը՝ որպես մարդու հիմնարար (ֆունդամենտալ) իրավունք: Ամենաէականն այստեղ այն է, որ, անկախ այն բանից, թե այս իրավունքներով շարժական կամ անշարժ ժառանգություն է պաշտպանվում, թե քաղաքացիական բնակչությունը, դրանք չեն ընձեռում պետություններին որևէ իրավունք՝ ի վնաս անհատի/համայնքի: Դրանով պաշտպանվում են միջազգային իրավունքում մարդու անձը, նրա իրավունքները (ներառյալ մշակույթի իրավունքը), այլ կերպ ասած՝ մարդասիրության սկզբունքների գերակայության դարաշրջանի սկիզբ է դրվում[158]: Միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում մշակութային ժառանգությունը համարվում է մարդու ստեղծագործ մտքի բացառիկ արտահայտություն, որի ոչնչացումը կամ վնասումը ուղղակիորեն խախտում է մարդու/համայնքի անդամների մշակութային իրավունքները թե՛ պատերազմի ժամանակ և թե՛ պատերազմից հետո: Կարևոր է նաև ընդգծել, որ միջազգային մարդասիրական իրավունքը կախված չէ պետության ճանաչ-

156 Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված հակամարտությունների ժամանակ», http://geopolitics.am/archives/12231 (մուտք՝ 15.12.2020):
157 Տե՛ս նույն տեղում:
158 Տե՛ս **Քոչարյան Վ.**, Միջազգային իրավունք, Ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2002, էջ 262-263:

ված լինել-չլինելուց, խտրական որևէ հիմք չունի և վերաբերում է մարդու մշակութային իրավունքների իրացման հնարավորություններին:

Միջազգային մարդասիրական իրավունքի 40-րդ կանոնը սահմանում է սովորութային դարձած մշակութային արժեքների ոչնչացման, բռնագրավման կամ դիտավորյալ վնասի և արտահանման արգելքը, որը կիրառելի է ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ[159]: Իսկ 41-րդ կանոնը սահմանում է, որ «Գրավող պետությունը պետք է կանխի գրավյալ տարածքից մշակութային արժեքների ապօրինի արտահանումը և ապօրինաբար արտահանված գույքը վերադարձնի գրավյալ տարածքի իրավասու մարմիններին»[160]: Միջազգային մարդասիրական իրավունքի 52-րդ կանոնի շրջանակներում մշակութային արժեքների կողոպուտի արգելքը ավազակային հարձակման ընդհանուր արգելքի հատուկ կիրառում է, որի խախտումները դատապարտելի են ազգային պետությունների, ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների կողմից:

Եզրակացություններ

Ադրբեջանը ազգային ինքնության կերտման և մշակութային ժառանգության պատկանելությունն ապացուցելու կեղծ որոնումների ճանապարհին իր ձևավորումից ի վեր մշակել է ընդգծված հակահայ պետական քաղաքականություն, որի հիմքում հայկական ինքնության և մշակութային հարուստ ժառանգության շարունակական ոչնչացումն է թե՛ թվացյալ «խաղաղության» և թե՛ պատերազմի ժամանակ: Ադրբեջանը արցախյան բոլոր պատերազմների ընթացքում շարունակաբար վնասել, ոչնչացրել, պղծել, ավերել, անվանափոխել, յուրացրել, օտարել և վանդալիզմի է ենթարկել հայկական մշակութային արժեքները՝ խախտելով մի շարք միջազգային պայմանագրեր: Վերջին՝ 44-օրյա պատերազմը վերահաստատեց, որ Ադրբեջանի «տարածքային ձգտումները» ինքնանպատակ չէին, այլ դրանց հիմքում ինչպես արցախահայության, այնպես էլ նրա ինքնության ու ստեղծած ժառանգության օտարումն ու ոչնչացումն էր: Պատմական մեծ նշանակություն ունեցող քրիստոնեական եկեղեցիներից, վանքերից, խաչքարերից, պատմական կառույցներից զատ՝ Ադրբեջանի կողմից Արցախի օկուպացված տարածքներում անընդմեջ ոչնչացվում են նաև ոչ վաղ անցյալում ստեղծված արժեքները, այդ թվում՝ արցախյան առաջին ազատամարտի հաղթանակին նվիրված հուշարձաննե-

159 Տե՛ս **Jean-Marie Henckaerts and Louise Doswald-Beck**, Customary International Humanitarian Law, Volume I: Rules, Cambridge university press, Published in the United States of America, International Committee of the Red Cross, 2005, https://www.icrc.org/en/doc/assets/files/other/customary-international-humanitarian-law-i-icrc-eng.pdf, էջ 133, Rule 40, Practice, Volume II, Chapter 12, Section C, https://www.icrc.org/en/doc/assets/files/other/customary-international-humanitarian-law-i-icrc-eng.pdf (մուտք՝ 21.05.2021):

160 IHL Database Rule 41. Export and Return of Cultural Property in Occupied Territory, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v1_rul_rule41 (մուտք՝ 21.05.2021).

ը, Արցախի հերոսների արձանները, հուշահամալիրները և այլն: Ժառանգությանը հասցված վնասն այս դեպքում դառնում է ամբողջական՝ ընդգրկելով պատմական ճշմարտությունների և իսկության տարրերի ոչնչացումը, խաթարելով թե՛ ներկայում այն համայնքի կենսընթացի մաս դարձնելու հնարավորությունները և թե՛ ապագայում այն սերունդներին փոխանցելու հնարավոր ուղիները: Եվ այստեղ հարց է ծագում. ինչպե՞ս պաշտպանի իր ինքնությունը մի հանրույթ, որն իր քաղաքական սահմանների միջազգայնորեն ճանաչված չլինելու պատճառով մի կողմից չի կարող մաս կազմել մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային քաղաքականությանը, իսկ մյուս կողմից էլ ամենախոցելին է հենց ժառանգության շարունակական կորստի տեսանկյունից, քանզի ենթարկվում է էթնիկ զտման և մշակութային ցեղասպանության: Եվ այստեղ թերևս միակ ու ամենաէական գործոնը, որ կարող է պաշտպանել արցախահայության մշակութային ժառանգությունը, **արցախահայ համայնքի մշակույթի իրավունքն** է՝ որպես մարդու հիմնարար մշակութային իրավունք՝ հաստատված միջազգային մի շարք պայմանագրերով և ամրագրված միջազգային մարդասիրական իրավունքի դրույթներով: Արցախահայության մշակութային ժառանգությունը՝ որպես տվյալ համայնքի ստեղծագործ մտքի նյութականացված (և ոչ նյութականացված) բացառիկ արտահայտություն, ինչպես նաև համայնքի կոլեկտիվ ինքնության հավաքական դրսևորում, ունի պահպանվելու, սերունդներին անխաթար փոխանցվելու լիիրավ իրավունք, որը անքակտելի իրավունք է, վեր նույնիսկ քաղաքական, տնտեսական, տարածքային և պետական այս կամ այն շահից: Արցախահայության մշակույթի իրավունքը, որը ենթադրում է ժառանգություն ստեղծելու, իր ստեղծած ժառանգությամբ ապրելու, այն վայելելու, նորը ստեղծելու և հաջորդ սերունդներին փոխանցելու իրավունք, չի կարող սահմանափակվել ոչ մի պատճառով: Այն հաստատված է թե՛ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, թե՛ ՄԱԿ-ի, թե՛ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով և ֆունդամենտալ իրավունք է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով», բայց շարունակում է ոչնչանալ, նաև այն կրող համայնքների կորստի կամ օտարման պատճառով: Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության ամենաէական գործոններից է նաև այն, որ արցախահայության ժառանգությունը համաշխարհային մշակութային բազմազանության մաս է, արցախահայ համայնքի կողմից ստեղծված և շարունակաբար ստեղծվող բացառիկ մշակութային արժեքների (նյութական/ոչ նյութական) համախումբ, որոնք իրենց ավանդն են ներդնում համաշխարհային քաղաքակրթության մեջ: Իսկ Արցախի ժողովրդի մշակութային արժեքներին հասցվող վնասը վնաս է՝ ուղղված ողջ մարդկության մշակութային ժառանգությանը, ուստի վերջինիս պաշտպանությունը մեծ նշանակություն ունի աշխարհի բոլոր ժողովուրդների համար, հետևաբար կարևոր է այդ ժառանգության միջազգային պաշտպա-

նության ապահովումը: Այս հիմնարար սկզբունքը ընկած է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված միջազգային կոնվենցիաների («Համաշխարհային նյութական ժառանգության մասին» 1972 թ., «Մշակութային բազմազանության մասին» 2001 թ., «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» 2003 թ. կոնվենցիաների, «Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թ. կոնվենցիայի և լրացուցիչ արձանագրությունների և այլ պայմանագրերի հիմքում: Շարունակելով մշակութային զտման գրեթե հարյուրամյա պետական քաղաքականությունը՝ Ադրբեջանը արցախահայության մշակութային ժառանգությունը չի ընկալում որպես աշխարհի մշակութային բազմազանության մի մաս և ոչ էլ որպես եզակի համայնքների կողմից ստեղծված մշակութային արժեքների համախումբ, այլ այն դիտարկում է իր սոցիալ-մշակութային տեսանկյունից և ոչնչացման ենթակա համարում այն ամենը, ինչ դուրս է սեփական «արժեհամակարգից»: Անտեսելով նաև Հաագայի և Ժնևի կոնվենցիաների հատուկ դրույթները՝ զերծ մնալու պատերազմի ընթացքում և դրանից հետո մշակութային արժեքների ոչնչացումից, վնասումից, ժառանգության հանդեպ թշնամանքի որևէ գործողությունից, Ադրբեջանը շարունակում է անտեսել ժառանգության արժեքների «հատուկ կարգավիճակը» և դրանք հաշվեհարդարի առարկա դարձնել: Եվ այս ամենը տեղի է ունենում 21-րդ դարում «քաղաքակիրթ մարդկության» աչքի առաջ: Եվ չնայած միջազգային օրենսդրության առկայությանը՝ Ադրբեջանի վարած քաղաքականության պատճառով Արցախում մշակութային ժառանգության կորուստը շարունակվում է մշտապես, իսկ Ադրբեջանի՝ իր իսկ ստանձնած միջազգային կոնվենցիաների կատարման պարտավորությունները և արցախահայության ժառանգության պաշտպանության հարցերը մինչ օրս մնացել են խնդրահարույց, անտեսված կամ միջազգային հանցավոր չեզոքության ու անտարբերության տիրույթում են:

Արմինե Հ. Տիգրանյան – զբաղվում է մշակութային ժառանգության պահպանության, կառավարման և հանրահռչակման խնդիրներով: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է պատերազմի ընթացքում և դրանից հետո ժառանգության պահպանության և պաշտպանության խնդիրները, մշակութային իրավունքի սկզբունքները, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության պետական և ոչ պետական մեխանիզմները, ժառանգության քաղաքացիական և համայնքային պահպանության, ինքնության և մշակութային ժառանգության հարցերը:

Summary

THE MECHANISMS FOR PROTECTION OF TANGIBLE CULTURAL HERITAGE OF THE ARMENIANS OF ARTSAKH

In the modern international legal system

Armine H. Tigranyan

Key words – cultural values, protection of heritage in the occupied territories, international humanitarian law, cultural law, destruction of the Armenian cultural heritage, ethnic cleansing, vandalism, anti-Armenian policy.

In the course of its false quest to build a national identity and prove its territorial affiliation, Azerbaijan /since its inception/ has pursued a sharply anti-Armenian state policy based on the continuous destruction of Armenian identity and rich cultural heritage during both – the pseudo "peace" and the war. During all the wars in Artsakh, Azerbaijan continuously damages and destroys Armenian cultural values, thus violating a number of international provisions. The recent war has confirmed that Azerbaijan's "territorial aspirations" are not an end in itself; they are based on the alienation and destruction of Armenian identity and heritage.

This article presents the international legal principles for protection of the cultural heritage (hereinafter referred to as CH) in the occupied territories from the point of view of cases of destruction, appropriation, desecration and vandalism of Armenian cultural property in the territories occupied by Azerbaijan after the Second Artsakh War (November 9, 2020).

The article begins with a historical overview, presents the gradual formation and development of the international legal field for protection of CH in the occupied territories after the war, as well as a number of conventional provisions from Hague Convention, Geneva Convention, UNESCO, the Council of Europe from the point of view of international human rights documents, norms of international humanitarian law and the laws that are customary for protection of cultural values in the occupied territories. This expertise also refers to the analysis of a clear program of the state policy of Azerbaijan on deliberate destruction of the Armenian identity and cultural heritage and summarizes the investigation of specific cases of destruction of Armenian cultural values, appropriations of heritage and desecrations by Azerbaijan after the war.

Պետություն և իրավունք, հատոր 4 (84), թիվ 3(75), հուլիս-սեպտեմբեր, 2021

And since the protection of cultural values in the occupied territories is an internationally recognized norm, which is mandatory for all states, however Azerbaijan continues to violate and damage the Armenian cultural values. Azerbaijan continues to perceive the heritage from its own socio-cultural point of view and what is outside of their "value system" is considered as a subject for destruction. Along with values of great historical significance, the values created not long ago are also being destroyed in the territories of Artsakh occupied by Azerbaijan, the loss of which is equal to the destruction of historical ones.

The cultural heritage of the Armenians of Artsakh, as the materialized (and non-materialized) expression of exclusive creative thoughts of a given community, as well as a collective manifestation of the identity, has the full right to be preserved and passed on to future generations. This right is enshrined by UNESCO, UN and by the international humanitarian law and is considered as a fundamental right in the Universal Declaration of Human Rights, however along with all this, it still continues to be destroyed, both physically and by the loss or alienation of the bearing communities.

And in fact, the study of this article shows that the most important factor in protecting the cultural heritage of Artsakh /along with numerous conventions on protection of cultural values in occupied territories/, is the right to protect the cultural heritage of Artsakh as such, being a fundamental human right enshrined in a number of international treaties, especially in international humanitarian law. And within this context, even if Azerbaijan cannot find any values in order not to destroy the heritage outside of its value system, the latter is obliged to do so, because that heritage is a part of the world cultural diversity and is the fundamental right of the culture (personal/community) of the Armenians of Artsakh.

Резюме

МЕХАНИЗМЫ ЗАЩИТЫ МАТЕРИАЛЬНОГО КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ АРМЯН АРЦАХА

В современной международно-правовой системе

Армине А. Тигранян

Ключевые слова - культурные ценности, охрана наследия на захваченных/оккупированных территориях, международное гуманитарное право, право на культуру, уничтожение армянского культурного наследия, этническая чистка, вандализм, антиармянская политика.

Азербайджан на пути созидания национальной самости и поисков территориальных претензий с начала своего формирования проводил подчеркнутую антиармянскую государственную политику, в основе которой лежало последовательное уничтожение армянской идентичости и богатого культурного наследия как во время кажущегося «мира», так и во время войны. Азербайджан на протяжении всех арцахских войн целенаправленно и последовательно разрушал и уничтожал армянские культурные ценности, тем самым нарушая положения ряда международных конвенций. Последняя война подтвердила, что «территориальные стремления» не были единственной целью Азербайджана, его действия также были направлены на отчуждение и уничтожение армянской самости и армянского культурного наследия.

В данной статье представлены международные правовые принципы защиты культурного наследия на захваченных (оккупированных) после войны территориях, которые рассматриваются с точки зрения разрушения, присвоения, извращения, а также вандализма на оккупированных Азербайджаном после второй арцахской войны (с 9-го ноября 2020 года) территориях Арцаха.

Статья начинается с исторического обзора, в ней представлено постепенное и последовательное формирование и развитие международного правового поля защиты культурного наследия на занятых после войны территориях с точки зрения ряда положений Гаагской, Женевской конвенций, конвенций ЮНЭСКО, Совета Европы, международных документов по правам человека, норм международного гуманитарного права и ставших обычными законов о защите культурных ценностей на оккупированных территориях. Настоящее исследование касается также анализа четко запланированной государственной политики целенаправленного уничтожения Азарбайджаном армянской самости и армянского культурного наследия и завершается расследованием конкретных

Պետական-իրավական գիտությունների հանդես, 3(75), հուլիս-սեպտեմբեր, 2021

случаев разрушения, присвоения наследия, извращения Азербайджаном армянских культурных ценностей.

И, несмотря на то, что на оккупированных территориях защита культурных ценностей является принятой на международном уровне, обычной и обязательной для всех государств нормой, Азербайджан, последовательно нарушая международные нормы, наносит удар по армянским культурным ценностям. Он продолжает воспринимать наследие со своей – социально-культурной точки зрения и считает подлежащим уничтожению то, что вне этой «системы ценностей». Наряду с имеющими большое историческое значение ценностями, на оккупированных Азербайджаном территориях Арцаха уничтожаются также ценности, созданные и не в таком уж далеком прошлом, потеря которых равноценна потере древних исторических памятников. Культурное наследие армянства Арцаха, будучи материализированным (а также нематериализированным) является выражением исторической творческой мысли жителей данной области, а также собирательным воплощением коллективной самости и имеет неукоснительное полноценное право быть переданным поколениям, что закреплено ЮНЭСКО, ООН, Международными миротворческими нормами и правами, и является фундаментальным правом Всеобщей конвенции по правам человека. Однако армянское культурное наследие продолжает уничтожаться как физически, так и по причине потери или отчуждения его носителей.

Вследствие представленных в данной статье результатов исследования, становится ясно, что наиболее существенным фактором защиты культурного наследия Арцаха – вне ряда конвенций и международных договоров о защите культурных ценностей на захваченных территориях – является Право о защите культурного наследия Арцаха, как и основополагающие Права человека, закрепленные рядом международных договоров, в том числе, положениями Международного гуманитарного права. И в этом контексте даже если Азербайджан не может найти какой-либо связи между защитой «своих земель» и сохранением находящихся вне его системы ценностей армянского культурного наследия, он все равно обязан сохранить армянское культурное наследие, поскольку оно является частью всемирного культурного многообразия, и его охрана считается фундаментальным правом на защиту культуры армянства (личности/общины) Арцаха.

REFERENCES

1. **Kirakosyan L.**, Mshakut‘ayin Yegheṛn (Arts‘akhi chartarapetakan hushardzanneri ōrinakov), Hayagitut’yan harts’er, Handes 1, Yerevan, 2014, (**In Armenian)**.
2. **K‘och‘aryan V**., Mijazgayin iravunk‘: Usumnakan dzeṛnark, Yer., Yerevani hamalsarani hrat., 2002 **(In Armenian)**.
3. **Petrosyan H.**, Mshakut‘ayin ēt‘nots‘idn Arts‘akhum (mshakut‘ayin zhaṛangut‘yan bṛnayurats‘man mekhanizmĕ), Shushi, 2010 **(In Armenian)**.